

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՋԵԿՈՒՅՑՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

32(55)
Դ-89

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏՈՒՄ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ԵՎ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

4649

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011



Տպագրության է Երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի խորհուրդը

Գիրքը հրատարակվել է ՀՀ-ում ԻԻՀ ղեկավարության
մշակույթի կենտրոնի հովանավորությամբ

Խմբագիրներ՝ Ա. Մարգարով
Գ. Քեռյան
Մ. Շաքիրա

Կազմողներ՝ Հ. Զ. Նազարյան
Վ. Գ. Առաքելյան

Ի 891 «Իրանի իսլամական հեղափոխությունը համեմատական
կոնստրուկտիվ», միջազգային գիտաժողովի հողվածների և
զեկույցների ժողովածու / Կազմողներ՝ Հ. Զ. Նազարյան,
Վ. Գ. Առաքելյան: Խմբագիրներ՝ Ա. Մարգարով և այլք.: Երվ.
ԵՊՀ հրատ., 2011, 80 էջ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	5
Ս. Ալի Մադայիան, Իսլամական հեղափոխության համեմատական քննարկումը	9
Վահան Բայրությունյան, Իրանական հեղափոխության ֆնեոմենը	11
Գագիկ Քեռյան, Բաղարական կուսակցություններն Իրանում.....	25
Самвел Маргарян, Международное влияние на ситуацию в регионе иранской исламской революции 1979 г.....	32
Ռուդիկ Յարայան, Իրանի իսլամական հեղափոխությունը տարածաշրջանային անվտանգության համատեքստում.....	39
Ռոման Սմբատյան, «ՃԱՍԸ» տասնօրյակը և իսլամական հեղափոխության հայրանակի Իրանում.....	45
Յանիս Ֆենդերթի, Իսլամական աշխարհի հասարակական շարժումների սոցիոլոգիայի քննարկումը վերջին Երկու տասնամյակների ընթացքում և Իրանի ազդեցությունը դրանց վրա	50
Վահն Առաքելյան, Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի տեղն ու դերը ԻԻՀ պետական համակարգում.....	63
Հայկ Նազարյան, Իրանի հասարակական-քաղաքական կյանքի յուսարևոտմը արևմտյան մամուլում իսլամական հեղափոխության տարիներին.....	70
Jafar Kabiri, Imam Khomeini and the Islamic Revolution of Iran.....	76

Հանուն Աստծո

ԼԱՆԱԲԱՆ

Բրանկի իսլամական հեղափոխությունը 20-րդ դարի վերջին տասնամյակների միջազգային ամենանշանակալի իրադարձություններից էր: Բրանական ժողովրդի անձնագոն պայքարի շնորհիվ Բրանում հաստատվեց եւր տիպի հասարակարգ և գաղափարախոսություն, որն ուղղված էր անկախ իսլամական պետության ստեղծմանը: Հեղափոխության առաջնորդ իմամ Նումեյնու սկզբունքները և գաղափարները ինչպես իրանցիների, այնպես էլ շատերի համար դարձավ ուղեցույց և ակտիվ քննարկման առարկա:

Սույն գիտաժողովը՝ նվիրված Բայանական հեղափոխության 32-ամյակին, նպատակ ունի պարզաբանել Բայանական հեղափոխության հետ կապված գիտական հետաքրքրություն ունեցող տարբեր հիմնախնդիրներ՝ արժեվորելով հեղափոխության դերն ու նշանակությունը պատմության էջերում:

Ժողովրդական ակտիվ գործընթացներ են դիտվում նաև մեր օրերում: Վերջին ամիսներին ԱՅրիկայի հյուսիսում և Միջին Արևելքում տեղի ունեցող իրադարձությունները հարուցել են համաշխարհային հանրության տարակուսանքն ու մտահոգությունը: Այդ երկրների ժողովուրդների շարժումներն ու ակտիվությունը, որոնք ուղղված են արդարության հաստատմանը, մարդկային վեհանձնությանը և իշխանավորների պատասխանատվությանը, ոչ միայն այդ երկրներում, այլև ամբողջ աշխարհում առաջացրել են հարցերի լայն շրջանակ:

Ժողովրդական շարժումների հիմնական շարժիչ ուժը երիտասարդները և հասարակության աղքատ ու գործազուրկ դասն են, որոնք կորցրել են ամենայն հույս ապագայի նկատմամբ: Այդ երկրների ղեկավարները հիմնականում նշանակություն չէին տալիս ժողովրդավարությանն ու ընտրություններին, տասնամյակներ շարունակ իրենց ձեռքում էին պահում իշխանության ղեկը, երկրի կարողությունները՝ վատնելով այս ամենը ի շահ հասարակության նեղ շրջանակների:

Ինչպես երեք տասնամյակ առաջ Իրանի Բալամական հեղափոխությունը, այնպես էլ մեր օրերում արաբական աշխարհի ժողովրդական շարժումները պահանջեցին և պահանջում են այն ղեկավարների հետաքուքները, ովքեր ուշադրություն չեն դարձրել բարոյական ու մարդկային սկզբունքներին, ժողովրդի ազատություններին, աղքատության և ընչազրկության վերացմանը:

Այս գրքում քննարկման են ենթարկվել Իրանում հեղափոխության, ինչպես նաև վերը նշված տարածաշրջանների հասարակական ջարժումների պատճառներն ու էությունը: Հեղվածների հեղինակները ընդգծել են պարզ և հստակ արժեքների հիման վրա պարելուն ուղղված հասարակության ջանքերը՝ նշելով այդ հասարակությունների վերքերին սպեղանի դնելու եղանակները:

Սեյեդ Ալի Սադախյան ՀՀ-ում ԻԻՀ դեսպան

بسمه تعالی

مقدمه

انقلاب اسلامی ایران یکی از مهمترین رویدادهای بین‌المللی آخرین دهه‌های قرن بیستم بود. به لطف مبارزه ایثارگرایانه ملت ایران، در ایران نظام و ایدئولوژی جدیدی برقرار شد که در جهت تشکیل دولت اسلامی مستقل بود. اصول و ایده‌های امام خمینی^۱، رهبر انقلاب، هم برای ایرانیان و هم دیگران بعنوان راه‌نما و موضوع بحث و بررسی‌ها تبدیل شد. هدف از این همایش علمی، که به مناسبت ۳۲- امین سالگرد انقلاب اسلامی برگزار شده است، تصریح مسائل مختلف دارای جذابیت علمی در ارتباط با انقلاب اسلامی، یا ارزشیابی نقش و اهمیت انقلاب در صفحات تاریخ است.

در این دوران نیز روندهای فعال مردمی در جریان است بطوریکه رویدادهایی که طی ماه‌های اخیر در شمال آفریقا و خاورمیانه در جریان است، شگفتی و نگرانی جامعه جهانی را برانگیخته‌اند. جنبش‌های فعال ملت‌های این کشورها در جهت برقراری عدالت، کرامت انسانی و بازخواست مسئولین نه تنها در آن کشورها بلکه در تمام دنیا چارچوب وسیعی از مسائل را به وجود آورده است.

نیروی اصلی جنبش‌های مردمی، جوانان و قشر فقیر و بیکار جامعه هستند که تمام امید خود را نسبت به آینده از دست داده‌اند. مسئولین کشورهای مذکور هیچ اعتقادی به دموکراسی و انتخابات نداشتند، دهها سال سکان حکومت را در دست خود نگه داشته و کل توانمندی‌های کشور را به نفع گروهی کوچکی از افراد تصاحب کرده بودند.

همانند انقلاب اسلامی ایران در سه دهه پیش، امروزه نیز جنبش‌های کشورهای عربی خواستار برکناری مسئولین بی توجه به اصول اخلاقی و انسانی، آزادی‌های مردم و رفع فقر هستند.

در این کتاب علل و ماهیت انقلاب اسلامی و همچنین جنبش‌های اجتماعی مناطق مذکور مورد بررسی قرار گرفته اند. نویسندگان مقالات تلاش‌های جامعه در جهت زندگی بر اساس ارزش‌های ساده و شفاف را خاطرنشان ساخته و شیوه‌های التیام بخشیدن به دردهای جوامع مذکور را نشان داده اند.

سید علی سقائیان
سفیر جمهوری اسلامی ایران
در جمهوری ارمنستان

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՍԵՄՍԱՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

ՀՀ-ում ԻԻՀ
արտակարգ և լիազոր դեսպան
Ս. Ալի Սադախյանի խոսքը

Ներկա դարաշրջանում իսլամական հեղափոխությունը իր տեսակի մեջ ինչպես նաև այլ հեղափոխությունների հետ համեմատելու և իշխանությունները փոփոխելու տեսանկյունից կարող է համարվել հազվագյուտ և յուրահատուկ երևույթ:

Գուցե այս հեղափոխության առանձնահատկությունը այն էր, որ իշխանությունը փոխեց ոչ զինված խռովարար ուժերի, ոչ հեղափոխական առաջնորդի և ոչ պարտիզանական եղանակով:

Հայաստանում ԻԻՀ դեսպան պարոն Սադախյանը ասաց. «Հեղափոխության առաջնորդն ու հիմնադիրը իսլամի շիա դավանանքի մտածող, փիլիսոփա, մարդաբան և վեհանձն ու գլխավոր մարդ էր: Այս հեղափոխությունը իր հիմնադրի տեսանկյունից համեմատությամբ այլ ուսմունքների և հեղափոխությունների նման է նրանով, որ մարդն է յուրաքանչյուր հեղափոխության ու էվոլյուցիայի գործոնն ու առանցքը»:

Իհարկե, յուրաքանչյուր ուսմունքի սահմանումն ու մոտեցումը մարդուն հատուկ է լինում, և, երբ մենք հայացք ենք գցում Իսլամական հեղափոխության հիմնադրի տեսակետներին, մտքերին ու խոսքերին նկատում ենք, որ չնայած նրանց հիմնական առանցքը Իսլամական գաղափարախոսության քննարկումն է, միաժամանակ իսլամի հետ կապված իմամի ուղերձը վերաբերվում է ընդհանուր արտահայտություններին, որովհետև մարդը դիտվում է որպես կեղեքումների ու բռնությունների ենթարկված էակ, որը սակայն ազատ է և միաժամանակ օգտագործում է այն բառը, որը մինչ այժմ չի դիտվել ոչ մի տեսակ գաղափարախոսությունում: «Որպես աշխարհի ընչազուրկներ՝ ոտքի կանգնեք»

արտահայտությունն ընդհանուր է, և երանում ասվա չեն ոչ կրոնական, ոչ ցեղային և ոչ սոսայական խմբավորումներ:

ՀՀ-ում ԲԿՆ ղեկավար հարգարժան պարոն Սաղախյանի խոսքերով, լուսսահոգի իմամը բողոքելով և շեշտադրելով բռնության և կեղեքիչների դեմ ընդմահալը և հիմնական նպատակը կեղեքիչների ու գեղութերի կողմից պարտադրյալ բռնության դեմ ուղղելը, մարդկանց կոչ է անում ինքնագիտակցության և գարթոնքի: Այս կոչը ոչ միայն Իրանի հասարակությանն է, իրանցիներին էր ուղղված, և անկասկած Իրանն էր համարվում այս հեղափոխության առանցքը, այլև ուղղված էր բոլոր երկրներում բռնության ու հալածանքի ենթարկված և կապանքների մեջ գտնվող մարդկանց: Այս պատճառով էր, որ իմամի ուղերձը ողջունվեց ոչ միայն իրանցիներին, այլև՝ Իրանի կրոնական փոքրամասնությունների (թրիստոնյա, հրեա, զրադաշտ և այլն) և նույնպես ողջունվեց երթորդ աշխարհի և հատկապես աֆրիկյան մայրցամաքի ու նույնիսկ լատինաամերիկայի բնությունների ու հալածանքների ենթարկված ժողովուրդների կողմից:

Մենք վկայ ենք տարածաշրջանում, իսլամական աշխարհում և արաբական երկրներում, այդ թվում՝ Եգիպտոսում և Թունիսում տեղի ունեցող իրադարձություններին, և, եթե անկողմնակալ և հետագողող մարդու հայերով նայենք այս խնդրին, պետք է ասել, որ սույն շարժումներն ու արարքները և գարթոնքը անկասկած բխում է իսլամական հեղափոխությունից, և չնայած, որ արևմուտքը՝ Միացյալ Նահանգների ղեկավարությամբ, մտադիր է շեղել այդ ժողովրդական արթնացումը, սակայն արդարամիտ լինելու դեպքում, ոչ ոքի չի հաջողվի անտեսել, իսլամական հեղափոխության գաղափարների և լուսսահոգի իմամի ազդեցությունը ժողովրդի սույն գարթոնքի և հյուսիսային Աֆրիկայի երկրներում բռնությունների ու հալածանքների ենթարկված, սակայն ինքնագիտակցությունը ձեռք բերած ժողովուրդների վրա:

*Հասան Բայրուդյան,
ԵՊՀ միջազգային հարաբերությունների և
ղլխականացիության ամբիոն*

ԻՐԱՆԱՎԱՆ ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՍԵՆԸ

1978-1979 թթ. իրանական հեղափոխությունից հետո թե՛ն անցել է ավելի քան երեք տասնամյակ, սակայն այդ հեղափոխության ֆենոմենը ևս այսօր չի դադարում գտնվելու տարբեր երկրների գիտնականների վերլուծարանների և քաղաքական գործիչների սենտուն ուշադրության կենտրոնում: Կասկածից վեր է, որ այդ հեղափոխությունը XX դարի վերջին քառորդի ամենավառ ու աննախադեպ իրադարձություններից էր: Նախ այդ հեղափոխությանը բնորոշ էր համաժողովրդական մասնակցությունը: Դա իսկապես ժողովրդական հեղափոխություն էր, որի հուժկու ալիքները սրբեցին ու տարան իրեն սպառած շահնշահական միապետական վարչակարգը: Հիբալի, իրանական հեղափոխությունը ոչ միայն մարտահրավեր նետեց Իրանում 2500-ամյա անցյալ ունեցող շահնշահական միապետական վարչակարգին, որն անկասկած դարձրել ընթացքում իրանական ժողովրդի մոտ նետել էր խորը արմատներ, այլև առաջադրեց հասարակական-քաղաքական կառույցի սկզբունքորեն նոր ձև, որը խարսխված էր կրոնի վրա, մի բան, որն իր նախադեպը չի ունեցել համաշխարհային պատմության մեջ:

Այդ հեղափոխությունը աշխարհին, հատկապես այսպես կոչված երրորդ աշխարհի ժողովուրդներին ցույց տվեց, որ կարելի է դատարկ ձեռքով, սակայն հավատով լի և միաբանությամբ հաղթել ամենագոր ուժերին: Որ երբ տիրապետող վարչակարգի դեմ շարժման մեջ ընդգրկված են ժողովրդի լայն զանգվածները, որոնք ոգեշնչված են իրենց գաղափարներով և համոզված իրենց ճշմարտության մեջ, տվյալ հակա-ժողովրդական և իր ելույթամբ բռնատիրական վարչակարգի կործանումը կանխելը գործնականում դառնում է անհնարին: Ոչ միևնույն ատամները զինված շահական կես միլիոնանոց բանակը, ոչ իր դաժանությամբ տխուր համբավ վաստակած քաղաքական ոստիկանությունը՝ ՄՍՎԱՔ-ը, ոչ շահական վարչակարգին աջակցությունը առաջատար

պետությունների և ամբողջատիրական ուժերի կողմից ի վիճակի չեղան արգելակելու և կանգնեցնելու ժողովրդական հեղափոխական շարժման հուժկու ալիքը: Իրենց հերթին, պայքարի դուրս եկած միլիտանտ զանգվածները դրսևորեցին զարմանալի տոկոսություն, անձնագոհություն և խիզախություն, որը սարսափի մասնեց բռնատիրական կառավարության և թույլ չտվեց նրան ժողովրդի դեմ լայն չափերով օգտագործելու բանակն ու ուժային մյուս կառույցները: Այդ առումով իրանական հակաշահական հեղափոխությունը կարելի է դասել համեմատաբար անարյուն հեղափոխությունների շարքը:

Այդ հեղափոխության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ընթացել է իր եզակի կամ ունիկալ պատմական ուղիով: Այլ կերպ ասած, այն օժտված է այնպիսի ինքնատիպ հատկություններով, որոնք նրան առանձնացնում են այլ հեղափոխություններից: Օրինակ, հայտնի իրողություն է, որ XX դարում երրորդ աշխարհի երկրներում տեղի ունեցած հեղափոխություններն ու հեղափոխական բռնկումները գործնականում կողմնորոշված էին դեպի Նորհրդային Միության կողմից աջակցություն գտնելը: Այդ առումով իրանական հեղափոխությունը կազմում էր բացառություն: Իրանը միակ երկիրն էր, որը հեղափոխություն իրականացրեց առանց դրաի աջակցության, որոշելով նաև հաղթանակից հետո իր քաղաքական ու տնտեսական անկախության ուղին անցնել իր սեփական ընտրած ճանապարհով:

Չեղափոխությունն Իրանում ամբողջ աշխարհի ուշադրությունը սևեռեց այդ երկրի վրա, քանի որ ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում ստեղծվում էր սկզբունքորեն նոր աշխարհաքաղաքական իրավիճակ: Առհասարակ պետք է նշել, որ իրանական հեղափոխությունն ուներ երկու կարևոր ուղղվածություն՝ արտաքին և ներքին: Կասկածից վեր է, որ այդ հեղափոխությունը վիթխարի ազդեցություն ունեցավ ողջ իսլամական աշխարհի վրա, նպաստելով անհասկանալի երկրների ժողովուրդների քաղաքական գարթոնքին: Հսկայական էր նրա ազդեցությունը նաև համաշխարհային զուրպ գարգացումների վրա: Այնուհետև հեղափոխությունն ուղղված էր միջազգային այն ուժերի դեմ, որոնք աշխատում էին իրենց կամքը փաթաթել իրանական ժողովրդի վզին: Իրանում զանգվածների դժգոհությունը սնուցող կարևորագույն պատճառներից մեկը այն էր, որ գերտերությունները Իրանը զարթնել էին իրենց կամակատարը, մի բան, որը խորապես նվաստացուցիչ էր իրանական ժողովրդի համար: Չպետք է մոռանալ, որ անցյալում Իրանը

եղել է եզրը պետականության և փառավոր մշակույթի տեր երկիր: Ուստի իրանական ժողովուրդը չէր կարող հանդուրժել գերտերություններից իր այդ ստորացուցիչ կայսյալ վիճակը:

Իրանական հեղափոխության հետևանքով լուրջ հարված հասցվեց Արևմուտքի ռազմա-ստրատեգիական, տնտեսական ու քաղաքական դիրքերին ոչ միայն Իրանում, այլև ամբողջությամբ վերջացած Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանում: Կարևոր է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ այդ հեղափոխությունը տեղի ունեցավ աշխարհի կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջաններից մեկում, որտեղ գերտերություններն ունեին կենսական շահեր, իսկ ուժերի հավասարակշռությունը խիստ վտանգված էր:

Ներքին առումով իրանական հեղափոխությունը հակամապեղատական, հակաշահական հեղափոխություն էր: Մոհամմեդ Ռեզա շահ Փեհլևիի ավտորիտար դիկտատորական վարչակարգը երկիրը մխրձել էր խորը տնտեսական ու քաղաքական ճգնաժամի մեջ: Միլիոնավոր աղքատ ու սնակն զանգվածները, չունենալով գոյության որևէ աղբյուր և ապագայի հեռանկար, քարշ էին տալիս խղճուկ գոյություն: Կառավարող շրջանների համար նրանք դատում էին վտանգավոր մի ուժ, որը թեև կազմակերպված չէր, բայց իր հուսահատության մեջ պատրաստ էր ամեն ինչի:

XX դարի 50-60-ական թվականներին, երբ երկիրը հասել էր քայքայման և կազմալուծման եզրին, ամերիկացիների խորոքով շահը նախաձեռնեց բարեփոխումների մի համալիր ծրագիր, որը նա անվանեց «Սպիտակ հեղափոխություն» կամ «Շահի ու ժողովրդի հեղափոխություն», դրանով իսկ փորձելով փրկել իր թագն ու գահը և խուսափել ներքինց եկող «Կարմիր հեղափոխությունից»: Այդ ծրագիրը շահը իրականացնում էր ենթելով նախօրից ստացվող հսկայական եկամուտների վրա: Մեծ որում, նա միամտորեն նեխադուր էր, թե նավթադուրները իրեն հնարավորություն կտան առանց մեծ ջանքեր գործադրելու մեղմել երկրում գոյություն ունեցող սոցիալական հակասությունները: Սակայն Մոհամմեդ Ռեզա շահի կողմից առաջ քաշված «հեղափոխություն վերսկի», «դեպի մեծ քաղաքակրթություն», «շահենշահական համալիրագ», «սպիտակ հեղափոխություն առանց մի կարիքի արյան» և նմանատիպ այլ կարգախոսներն ու ծրագրերը ոչ միայն վարչակարգը չփրկեցին կործանումից, այլև էլ ավելի ունեացրին շահական վարչակարգի անկման հավանականությունը:

Դրանք հեղինակագրվեցին և ավելի շուտ առաջ բերեցին հասարակության լայն խավերի բացասական ռեակցիան: Ամենագարմա-կային թերևս այն էր, որ իրանական հեղափոխությանը նախորդող շրջանում ձևական հատկանիշների առումով երկիրը արձանագրում էր անտեսական որոշակի աճ, իսկ շահական բռնապետությունը գտնվում էր իր հզորության գագաթնակետին:

«Սպիտակ հեղափոխությունը» կամ «շահի և ժողովրդի հեղափոխությունը» ճեղքվածք տվեց, որովհետև անդուները իրանական հասարակության «վերևների» և «ներքևների» միջև չափազանց խորն էր, երկիրը համակած ճգնաժամը կրում էր համակարգային բնույթ, ուստի գործնականում հնարավոր չէր այն հաղթահարել վերևից իրականացվող բարեփոխումների օգնությամբ: Ենթադրությունները ցանկացած երկրում էլ վերջո ժողովրդին հանգեցնում է այն եզրակացության, որ խորքային-համակարգային արմատական փոփոխությունը հնարավոր է կյանքի կոչել միայն հեղափոխության ճանապարհով:

Ամբողջ ինչիցը կայանում էր նաև նրանում, թե ում շահերի օգտին էին կատարվում շահական բարեփոխումները և երկրի արդիականացումը: Դրանք իրագործվում էին միապետական տրամադրություններ ունեցող իրանական վերնախավի և այսպես կոչված «նոր բուրժուազիայի» շահերի օգտին, միաժամանակ վառարացնելով իրանական հասարակության մեծ մասի նյութական ու սոցիալական վիճակը: Ամբողջությամբ վերցրած իրանական բնակչության մեծ մասը իր բաժինը չէր ստանում նավթարդյունքների հսկայական հոսքից: Հետևաբար, իրանական հեղափոխության կարևորագույն նպատակներից էին ոչ միայն երկրի քաղաքական ու տնտեսական անկայության արեգակվումը, այլև սեփական երկրի հարստություններին տեղ կանգնելու և դրանք նպատակային ձևով օգտագործելու ձգտումը:

1978-1979 թթ. իրանական հեղափոխությունը հաճախ անվանում են իլյամական հեղափոխություն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն մեծապես խարսխված էր կրոնի սկզբունքների վրա: Այդ հեղափոխությունը ցույց տվեց, որ մոլորություն ու նյութապաշտության մեջ խճճված աշխարհում կրոնը չի կորցրել իր նշանակությունը և վերածվել անախորհիզմի: Որ մեք օրերում ևս այն կարողանում է մարդկային հույս ներշնչել և ազատել ներքին կապանքներից, ինչպես նաև մարդկության հիմնական հարցադրումներից տալ պարզ պատասխաններ:

Այն, որ XX դարի 70-ական թվականներին Իրանում տեղի ունեցավ

կրոնական սկզբունքների վրա խարսխված հեղափոխություն, առաջին հայացքից թվում է գարնանայի ու անհավանական այն առումով, որ կշկված ժամանակաշրջանում իրականացվող «Սպիտակ հեղափոխության» շնորհիվ երկիրը արագ տնտեսկերով քայլում էր դեպի Արևմուտք: Հետևաբար թվում է թե որևէ պատճառ գոյություն չունեն, որ ժողովուրդը իրականացնել կրոնական հեղափոխություն, որովհետև երկրի վկայություններն արդեն ցույց են տալիս կանոն հասարակության վերաբերմունքը կրոնի նկատմամբ իրականում է: Ուստի պետք է ենթադրել, որ հավատավոր իրանական ժողովրդի մոտ կրոնական զգացումը պահպանվում էր հոգով խորքում: Միաժամանակ կասկածից վեր է, որ հեղափոխության առաջնորդ իմամ Խոմեյնին կարողացել է ոչ միայն իր ժողովրդի մոտ արթնացնել բռնության դեմ պայքարի ոգին, այլև քնած խիղճն ու կրոնական զգացումները: Այլ կերպ ասած, իմամի առաջ քաշած կրոնա-քաղաքական սկզբունքները համապատասխանում էին իրանական հասարակայնության բոլոր շերտերի մտածողությանն ու մշակույթին: Իրավացի է ամերիկացի իրանագետ Նիքոլ Քեդին, որը գրում է. «Այսօրվա Խոմեյնին նույնիսկ բազմաթիվ ոչ հավատացյալների համար դարձավ հեղափոխության խորհրդանշական առաջնորդը»:

Անշուշտ ոչ պակաս կարևոր նշանակություն է ունեցել նաև Մոհամադ Ռեզա շահի կողմից իրականացված հակակրոնական քաղաքականությունը: Հայտնի իրողություն է, որ շահը առճակատման զննած ժողովրդի կրոնական համոզմունքներին և հոգևորականությանը, այն դեպքում, երբ նույնիսկ բարեփոխումների գործընթացում նման առճակատման անհրաժեշտություն չկար: Օրինակ, նա իսլամական հիջրի օրացույցը փոխարինեց այսպես կոչված «թագավորական օրացույցով», դրանով իսկ աննախընթաց կերպով շիկացնելով մթնոլորտը: Կամ Իրանի շիական հոգևորականության դիրքերը թուլացնելու միտումով ամեն կերպ աշխատում էր բարձրացնել Իրանի նախախլամական շրջանի ավանդույթները և ընդհանրապես, նսեմացնում իսլամական շրջանի նշանակությունը: Այդ նպատակով 1976 թ. շահը մեծ շուքով կազմակերպեց Իրանի պետականության 2500-ամյակին նվիրված տոնակատարություններ: Բնականաբար նման կարգի միջոցառումները անխուսափելիորեն խթանելու էին միապետական իշխանության օրինակականության ճգնաժամը:

Իրանական հեղափոխության ֆեռմունքներից է նաև այն, որ շարժումը գլխավորեց հոգևորականությունը և ոչ թե որևէ դասակարգ կամ

խավ: Արևմտյան շատ վերլուծաբաններ այդ **Ի**րանույթն անվանում են արտառոց: Իրականում էթն նկատի ունենանք **Ի**րանում տվյալ ժամանակաշրջանում առկա իրողությունները, ոչ մի **ա**րտառոց բան չկա և անտրե ինչու: Բանը նրանումն է, որ նա հեղափոխության պահին իրանական հոգևորականության ինստիտուտը միակ համագրային համայնքական կազմակերպված, կտու կառույցներ **ո**ւնեցող ինստիտուտն էր: որն ընդդիմադիր դիրք էր գրավել միայնակ **ա**րևելյան վարչակարգի նկատմամբ: Այնուհետև, գաղտնիք չէ, որ Իրանի **Շ**իական հոգևորականությունը միշտ էլ գանգվածների և Իրանի սոցիալ-քաղաքական կյանքի նկատմամբ ունեցել է մեծ ազդեցություն: Ավելի **ի**ն, նա հավակնել է աշխարհիկ իշխանության լծակներին: Բոլոր ժամանակներում նա աշխարհիկ իշխանության նկատմամբ դրսևորել է նա **և** ընդդիմադիր տրամադրություններ: Իրանում իսլամի շիական ուղղությունը անկասկած հան դիսանում էր իսլամական նացիոնալիզմի հիմքը: Այլ կերպ ասած, շիիզմը դա հեղափոխության ազգայնական գաղափարախոսությունն էր: Շեղափոխության առաջնորդների կարծիքով **մ**ի իսլամ կրոնը ի դեմս շիիզմի, կարող էր երաշխավորել մարդու և ողջ հասարակության անույր քարոշական ոգու պահպանումը:

Ուշագրավ է նշել, որ ամերիկացի իրա **Ն**ագետ Թեդա Մրոյտյուր իսլամի շիա ուղղությունը համարում է առաջադեմ ուժ, որն ունակ է ճանապարհ հարթելու զարգացած իշխանության **ձ**ևնապարհի համար: ինչպես ժամանակին Ֆրանսիայում դա կ **Ա**տարեցին յակոբիններ: Իրանական ժողովրդի հասարակական գիտակցության մեջ ամրակայված է շիական գաղափարական այն դոկտրին **ը**, որ էթն ժողովրդին կուսավորում է բռնակալը և մի մարդ, որը չի մտահոգած հասարակական շահերով, այս նա պետք է տապալվի: Ուստի **ի** խոսմելնի առաջադրանք հարցադրումները սոցիալական արդարության, հավասարության ու անկախ զարգացման վերաբերյալ, հեշտությամբ կարող էր հանդես գալ որպես իրեն վարկաբեկած **»** մեծ քաղաքակրթության **»** հասարակություն ստեղծելու շահական քաղաքական կուրսի այ **լ**րետրանք:

Իրանական հեղափոխությանը բնորոշ էր նաև հոգևորականների և մտավորականության գործողությունների **հ**աճատեղ ու միասնական ուղղորդումը:

Կասկածից վեր է, որ իրանական հեղա **փ**ոխությունը կրոնական գաղափարներ պարզեցնեց ողջ իսլամական աշխար **հ**ին: Այն քաղաքականությունը նաև մահմեդականների գիտակցություն **ը**: Դեռևս XIX դարում մի

ույթը անվանաբար հասարակագետներ ու մտածողներ (Շեքել, Կարլ Մարքս, Մայքլ Ալեր և այ **լ**ն) հայտնել էին այն տեսակետը, որ կրոնը կրոնը բնագավառներում և **և** ատկապակ հասարակական կյանքում դեպի ներքին է գնում: Մակախ **Ի**րանի իսլամական հեղափոխությունն այսպես ընդ որ կրոն աշխարհում գտնվում է վերակենդանացման փուլում: Իրանական հեղափոխությունը նոր շունչ ու ոգի հաղորդեց իսլամական կյանքին: Այլ հեղափոխությանն հետևանքով իսլամը երբեք փանցեց քաղաքական գործընթացներին **»** մեջ և նույնիսկ ծնունդ առավ «քաղաքական կյանքի հավաքությունը: Պատահական չէ, որ իրանական հեղափոխությունը կեսու մեծ թվով հետազոտողներ և քաղաքագետներ սկսեցին խորությամբ ուսումնասիրել իսլամը, փորձելով բացահայտել այդ կրոնի ներքին «գաղտնի» գաղափարակները:

Անսպասելի տեղի ունեցած հեղափոխությունների վերլուծությունը նրանու կերպով բերում է **ա**յն համոզման, որ որպես կանոն հեղափոխությունը գրունում է հանդիսանում քաղաքական և տնտեսական նվաճարարական խախտումը: Իրանում տեղի ունեցավ հակաառաջը: Այդ երկրում կրոնը նույնիսկ համարվում էր հասարակական այն կարևորագույն ուժը, որը համարվում էր պարզապես ու հար **լ**րանակի տարրով իրանական ժողովրդին:

Իրանական հեղափոխության շնորհիվ Իրանում ստեղծվեց XX դարի համար եզակի (ունիկալ) բնույթի մի պետական կառույց՝ իսլամական հեղափոխություն, որը քաղաքական, իրավական, տնտեսական, քաղաքական և այլ առումներով ամբողջապես կառուցված է կրոնական հիմունքների վրա: Իմամ **խ**ոմեյնեու կառուցած քաղաքական ուսմունքի հիմունքներն սկզբունք են կրոնն է: Իմամի համար կրոնը հանդիսանում էր և մարդու բարոյական ինքնակատարելագործման միջոց, և հասարակության վերակառուցման գործիք: Երա կողմից իսլամական արժեքների դիմելը, սակայն, բնավ չէր նվազեցնում իրաժարում մնացած ընդ որ հուճարիտական արդիտիվ անհատներին և մարդկության մեծամասնության մշտական գիտակցությունը: Պատահական չէ, որ իրեն ընդունող այն հարզին, թե ինչպիսիք **»** պիտի լինի Իրանի գրականությունը, իրեն անվարան պատահա **»** անել է: «Ինչ պետք է լինի ոչ արևելյան և ոչ էլ արևմտյան, այլ՝ համարա **ր**դկայանի»:

Իրանի ժողովրդի և Իրանի **»** նորագույն պատմության մեջ որպես իսլամական հեղափոխության հիմնադիր: Իսլամական հեղափոխությունը կեսու ընկած Իրանի պատմությունը անվարան կարելի է անվանել նախնիի դարաշրջան:

խավ Արևմտյան շատ վերլուծաբաններ այդ երևույթն անվանում են արտառոց Իրականում եթե նկատի ունենանք Իրանում տվյալ ժամանակաշրջանում առկա իրողությունները, ոչ մի արտառոց բան չկա և անաթե ինչու: Բանը նրանումն է, որ նախ հեղափոխության պահին իրանական հոգևորականության ինստիտուտը միակ համազգային համաիրանական կազմակերպված, կոտ կառույցներ ունեցող ինստիտուտն էր, որն ընդդիմադիր դիրք էր գրավել միավտանական վարչակարգի նկատմամբ: Այնուհետև, գաղտնիք չէ, որ Իրանի շիական հոգևորականությունը միշտ էլ զանգվածների և Իրանի սոցիալ-քաղաքական կյանքի նկատմամբ ունեցել է մեծ ազդեցություն: Ավելին, նա հավակնել է աշխարհիկ իշխանության լծակների: Բոլոր ժամանակներում նա աշխարհիկ իշխանության նկատմամբ դրսեորել է նաև ընդդիմադիր արամադրություններ: Իրանում իսլամի շիական ուղղությունը անկասկած հանդիսանում էր իսլամական նացեռնակվալի հիմքը: Այլ կերպ ասած, շիրիզը դա հեղափոխության ազգայնական գաղափարախոսությունն էր: Նեղափոխության առջնորդների կարծիքով միայն կրոնը էլ դեմ շիրիզի, կարող էր երաշխավորել մարդու և ողջ հասարակության առողջ բարոյական ոգու պահպանումը:

Ուշագրավ է նշել, որ ամերիկացի իրանագետ Թեդա Մորչաուր իսլամի շիա ուղղությունը համարում է առաջացել ուժ, որն ունակ է ճանապարհ հարթելու զարգացած իշխանության ձևավորման համար, ինչպես ժամանակին Ֆրանսիայում դա կատարեցին յակոբինները: Իրանական ժողովրդի հասարակական գիտակցության մեջ ամրակայված է շիական գաղափարական այն դոկտրինը, որ էթե ժողովրդին կառավարում է բռնակալը և մի մարդ, որը չի մտահոգած հասարակական շահերով, ապա նա պետք է տապալվի: Ուստի Խոմենիի առաջադրած հարցադրումները սոցիալական արդարության, հավասարության ու անկախ զարգացման վերաբերյալ, հեշտությամբ կարող էր հանդես գալ որպես իրեն վարկերեկան «Մեծ քաղաքակրթության» հասարակություն ստեղծելու շահական քաղաքական կուրսի այլընտրանք:

Իրանական հեղափոխությանը բնորոշ էր նաև հոգևորականների և մտավորականության գործողությունների համատեղ ու միասնական ուղղորդումը:

Կասկածից վեր է, որ իրանական հեղափոխությունը կրոնական զարթոնք պարզենց ողջ իսլամական աշխարհին: Այն քաղաքականացրեց նաև մահմադականների գիտակցությունը: Դեռևս XIX դարում մի

շարք ականավոր հասարակագետներ ու ստանդոններ (Նեզե, Կարլ Մարքս, Մաքս Վերբեր և այլն) հայտնել են այն տեսակետը, որ կրոնը կրոնը բնագավառներում և հատկապես հասարակական կյանքում դեպի անկում է գնում: Մակայն Իրանի իսլամական հեղափոխությունն ապացուցեց, որ կրոնն աշխարհում գտնվում է վերակենդանացման փուլում: Իրանական հեղափոխությունը նոր շունչ ու ոգի հաղորդեց իսլամական կրոնին: Այդ հեղափոխության հետևանքով իսլամը կերթափանցեց քաղաքական գործընթացների մեջ և նույնիսկ ծնունդ առավ «քաղաքական իսլամ» հասկացությունը: Պատահական չէ, որ իրանական հեղափոխությունից հետո մեծ թվով հետազոտողներ և քաղաքագետներ սկսեցին խորությամբ ուսումնասիրել իսլամը, փորձելով բացահայտել այդ կրոնի ներքին «գաղտնի» զսպանակները:

Աշխարհում տեղի ունեցած հեղափոխությունների վերլուծությունը ակնհայտ կերպով բերում է այն համազման, որ որպես կանոն հեղափոխության պատճառ է հանդիսանում քաղաքական և տնտեսական հավասարակշռության խախտումը: Իրանում տեղի ունեցավ հակառակը: Այդ երկրում կրոնը հանդիսացավ հասարակական այն կարևորագույն ուժը, որը միահամուտ պայքարի ու հաղթանակի տարավ իրանական ժողովրդին:

Իսլամական հեղափոխության շնորհիվ Իրանում ստեղծվեց XX դարի համար եզակի (ուսիկալ) բնույթի մի պետական կառույց՝ իսլամական հանրապետություն, որը քաղաքական, իրավական, տնտեսական, մշակութային և այլ առումներով ամբողջապես կառուցված է կրոնական սկզբունքների վրա: Իմամ Խոմենին կառուցած քաղաքական ուսմունքի նպակետային սկզբունքը ևս կրոնն է: Իմամի համար կրոնը հանդիսանում էր և՛ մարդու բարոյական իրենակատարելագործման միջոց, և՛ հասարակության վերակառուցման գործիք: Երա կողմից իսլամական արժեքների դիմելը, սակայն, բնավ չէր նշանակում հրաժարում մնացած բոլոր իմամնախոսական պաղիտիվ ավանդույթներից և մարդկության ընդհանուր մշակութային ժառանգությունից: Պատահական չէ, որ իրեն տրված այն հարցին, թե ինչպիսի՞ն պիտի լինի Իրանի գրականությունը, իման անվարան պատասխանել է. «Մյն պետք է լինի ոչ արևելյան և ոչ էլ արևմտյան, այլ՝ համամարդկային»:

Խոմենիին մտել է Իրանի նորագույն պատմության մեջ որպես իսլամական հանրապետության հիմնադիր: Իսլամական հեղափոխությունից հետո ընկած Իրանի պատմությունը անվարան կարելի է անվանել Խոմենիի դարաշրջան:

466

Իրանական հեղափոխության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ այն դասակարգային հեղափոխություն չէր: Երկրի տնտեսությունը չի եղել հասարակական հավաստությունների առաջացման դրդապատճառը և նրանում փոփոխություններ մտցնելը չի հանդիսացել հեղափոխականների հիմնական նպատակը: Դրա համոզիչ վկայություն է հանդիսանում այն իրողությունը, որ Իրանի տնտեսությունը հեղափոխությանը նախորդող և հաջորդող արտադրողական համայնքում ավելի բարենպաստ վիճակում էր: Այլ կերպ ասած, դժգոհության առկայությունը և մարդկանց ազատության ու հավասարության ձգտումն էր, որ ծնեց հեղափոխություն և ոչ թե սենյի, բնակչության կենցաղային վիճակի ու նյութական պայմանների բավարար կամ անբավարար պայմանները:

Որոշ հեղինակներ հայտնել են իրականությանը չհամապատասխանող այն տեսակետը, որ իբր իմամ Խոմեյնիին, որը կատարելագույն մեթոդն է չէր ընդունում Իրանում շահական իշխանության և առհասարակ միապետական ինստիտուտի օրինակությունը (չեզիտիսմությունը), որը հավասարազոր էր շահական վարչակարգին քաղաքական պատերազմ հայտարարելուն, դրանով իսկ հակադրվում էր Իրանի արդիականացմանը: Սակայն իրականում նա հակադրվում էր ոչ թե Իրանի նորացմանը, նրա առաջադիմական զարգացմանը, այլ շահին ու նրա բռնատիրական վարչակարգին:

Իսլամական հանրապետության ստեղծումով դարեր շարունակ միապետական-շահնշահական ավանդույթներով ապրած Իրանը թնակոխեց հանրապետական զարգացման ճանապարհ իր վրայից թոթափելով անցյալի բեռը: Կառավարման իսլամական ձևը իրենով նշանակվորում էր ոչ միայն նոր տիպի պետական համակարգի ստեղծում, այլև նոր աշխարհայացքային կառույցի արմատավորում և սկզբունքորեն նոր հայացքը դեպի աշխարհն ու հայրենիքը: Խոմեյնիին առաջ քաշեց իր երկրի զարգացման այսպես կոչված «երրորդ ուղու» կոնցեպցիան, որը նա ձևակերպում էր հետևյալ կերպ. «Ոչ Արևմուտք և ոչ էլ Արևելք, այլ իսլամ» (նա շարդի, նա դարբի էլյամի): Այսինքն Իրանի զարգացումը պետք է տեղի ունենար ոչ արևմտյան դասական կապիտալիզմի ուղիով և ոչ էլ արևելյան սոցիալիստական, այլ սեփական ճանապարհով, որն իմամը անվանում էր «իսլամական»: Դա նշանակում է, որ կատարելով հեղափոխություն, Իրանը ձգտում էր իր առանձնահատուկ տեղը գրադեցնել ժամանակակից աշխարհում: «Ոչ Արևմուտք և ոչ Արևելք, այլ

իսլամ» կարգախոսը հանդիսանում էր Իրանի Իսլամական Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության պաշտոնական ուղղությունը վերջին 30 տարիների ընթացքում:

Իրանական հեղափոխության մյուս առանձնահատկությունը այն էր, որ այն ոչ միայն քաղաքական ու հասարակական հեղափոխություն էր, այլև բարոյական ու հոգևոր հեղափոխություն: Միաժամանակ նա ակնառու կերպով ցույց տվեց, որ աշխարհում կայուն խաղաղություն կարելի է ապահովել միայն մարդու արժանապատվության ըմբռնման առկայության դեպքում: 1989 թ. Միխայիլ Գորբաչևին հասցեագրված նամակում իմամ Խոմեյնիին գրում էր, որ «Ձեր երկրի հիմնական խնդիրը սեփականության, տնտեսության և ազատության մեջ չէ: Ձեր հիմնական դժվարությունները պայմանավորված են իրական հավատքի և Աստծո բացակայությամբ»: Որ «խաղաղությունն առանց հավատքի երբեք չի կարող երկրի վրա կայուն և տևական լինել»: Նա ասում էր, որ մարքսիզմը չի բավարարում մարդկային իրական պահանջները, որովհետև այն նյութապաշտական ուսմունք է: Անհավատության ու աստվածամեթոթության դեմ պայքարի անխոջ մարտիկ Խոմեյնիին պնդում էր, որ կրոնական և հոգևոր արժեքները կորցրած հասարակությունը կանգնած է ոչնչացման եզրին: Իմամի հաստատ համոզմամբ, մուրորության մեջ են այն մարդիկ, ովքեր կարծում են, որ էթե Աստված չի երևում, ապա նա գոյություն չունի:

Խոմեյնիին Աստծո հանդեպ հավատքը, կրոնների միջև երկխոսությունը, ազատությունն ու արդարությունը, մարդկանց միասնությունն են միմյանց նկատմամբ սերը համարում էր խաղաղությանը հասնելու ուղին:

Չարի է առհասարակ նշել, որ թեև այսօրյաի Ռուսիայի Մուսավի Խոմեյնիի մասին թե՛ Իրանում և թե՛ արտասահմանում լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ, սակայն նրա ֆենոմենը և առհասարակ նրա իրական կերպարը նա զիտության մեջ դեռևս ամբողջությամբ չի պարզաբանվել: Համենայն դեպս պարզ է մի բան, Խոմեյնիին մարգարեի նման հայտնվեց այն ժամանակ, երբ իր հայրենիքը նրա կարիքն ուներ: Ես նրբին կերպով զգալով իր երկրում ստեղծված ճգնաժամային իրավիճակը, իրանական ժողովրդին տարավ դեպի վերածնություն: Իրանցի պատմաբան Մոհամադ Ռեզա Թաջիբը խոսելով հեղափոխության հաղթանակի գործում իմամ Խոմեյնու դերակատարության մասին գրում է. «Իմամի խոսքը վստահելի ու հասանելի էր... Այն կառուցած էր

ոչ միայն մտածելակերպի փոփոխությունները, այլև տեղ էր գտնում տանջված և արհամարհված մարդկանց հոգում ու սրտում, և հասարակության անդամները ոչ թե բանականությունից, այլ սիրուց դրոշմված, նրա դրոշակակիրը դարձան:

Խոմենյին իր գործունեությանը դարձել էր միապետության ու շահի անտիպոզ, որը և հնարավորություն տվեց նրան առանց մեծ դժվարության առանձին դժգոհ իրանցիների մոբիլիզացնել գանգվածային շարժման համար: Միջել Ֆուկոն, որը հեղափոխության հաղթանակի տարիներին գտնվում էր Իրանում, գտնում է, որ «այաթոլլա խոմենյինի անձնավորությունը առաջաելի է նմանելում»: Եւ մեջբերում է Աբադան քաղաքի գործադուլավորների հետ իր ունեցած զրույցը. «Մենք այնքան էլ կրոնամոլ չենք»,- ասում են նրանք: Ֆուկոյի այն հարցին, թե «բա ո՞ւմ եք վստահում, քաղաքական որևէ կուսակցության», գործադուլավորները պատասխանում են. «Ո՛չ մի կուսակցության: Ո՛չ մեկին, բացի խոմենյուց, միայն նրան»:

Խոմենյու կառուցած քաղաքական ուսմունքի ելակետային սկզբունքը կրոնն է, իսկ վերջնական արդյունքը՝ ազատությունը, անկախությունը և դիմադրությունը բռնության մութ ուժերին և օտար տիրակալությանը: Խոմենյին ոչ միայն կրոնական, այլ քաղաքական բարենորոգիչ էր: Եւ կարողանում էր իր ուրույն մտազնունները դրսևորել արդի ժամանակաշրջանի միջազգային բոլոր գերխնդիրների նկատմամբ՝ շատ հաճախ տալով դրանց ռազիոնալ լուծման համար արդյունավետ դեղատոմսեր: Իմամը նաև մեր ժամանակների հասարակական-քաղաքական կյանքի խորաթափանց մեկնաբան էր և ապագա զարգացումների պայծառատես գուշակ: Եւ արդի ժամանակաշրջանի խոշորագույն բարենորոգիչ էր: Խոմենյին իր ազատության, արդարության, ընչազուրկների պաշտպանության կոչը չէր հղում միայն մեկ ազգության, այլ բոլանդակ աշխարհին:

Իմամը քաղաքական խիզախության տեր անձնավորություն էր, որը չէր կնչեցեց ամբողջատիրական բռնակալական վարչակարգի առջև: Եւ հասկանալի կառավարության վարչապետ Ալամին գրած իր մի նամակում նա խիզախորեն ձեռնդր էր նետում իշխանություններին, ասելով. «Իմ սիրտը պատրաստ է ձեր գինեգործների սվինների համար: Ես երբեք չեմ լրի»:

Խոմենյին օտարերկրյա տիրապետության դեմ պայքարող աննկուն մարտիկ էր: Եւ մշակեց պայքարի բացարձակապես նոր եղանակներ.

որոնք հար և նման էին Մահաթմա Գանեյի «սաթիպագրահային», պայքարի ոչ բռնի դիմադրության ձևին:

Խոմենյին ոչ միայն հեղափոխական գաղափարների տեսաբան էր, այլև իրանական ժողովրդի հեղափոխական պայքարի պրակտիկ ղեկավար: Եւ կարողացավ գանգվածների հեղափոխական եռանդն ուղղել դեպի պետության վերակառուցման կողմ:

Իրավամբ, Խոմենյին նորարար քաղաքագետ էր: Նրան բնորոշ էր նաև քաղաքական պրագմատիզմը: Եւ վճռականորեն դեմ էր ազգերի ու ժողովուրդների նկատմամբ ռասայական մտաեցումներին: Վերին աստիճանի հետաքրքիր է Խոմենյու վերաբերմունքը Իրանի կրոնական փոքրամասնություններին, մասնավորապես, հայերի նկատմամբ. «Մենք հարգում ենք կրոնական փոքրամասնություններին, որովհետև նրանք մեր ազգի մասն են կազմում, մեր երկրի բնակիչներն են»,- ասել է իմամը: Մեկ այլ առիթով նա արտահայտվել է հետևյալ կերպ. «Մենք խոր հարգանք ենք օտմուն տալանդալոր հայ ժողովրդի նկատմամբ: Մենք լավ ծանոթ ենք հայ ժողովրդի պատմությանը, այդ թվում և 1915 թ. Շայտց գեղասպանությանը... Ես լրիվ երաշխավորում եմ հայերի ապահովությունը որպես Իրանի արժանավոր և իրավահավասար քաղաքացիներ»:

Չիրավի, իմամ Խոմենյին քարիզմաթիվ քաղաքական առաջնորդ էր: Նրա ազդեցությունը վիթխարի էր ողջ իսլամի տարածաշրջանում: Իմամը այն մարդն էր, որն իրանական ժողովրդին առաջնորդեց դեպի XXI դար: Մահմեդական Արևելքում նա վերջինս ազատության ու անկախության ջահը: Դեռ պատանեկության տարիներից նրա հոգում ձևավորվել էր չարության դեմ մարտնչելու ոգին: Եւ հանդիսացավ այն պատմական անհատականություններից մեկը, որը թափ հաղորդեց միլիոնավոր մարդկանց քաղաքական ու հեղափոխական եռանդին, ինչպե՛ս ներշնչեց նրանց՝ հաղթահարելու առօրյա կյանքի դժվարությունները, հավատով լցրեց ապագայի նկատմամբ:

Խոմենյին կտրուկ քննադատում էր արևմտյան քաղաքակրթությունը, համակարգն ամբողջությամբ և մանավանդ վճռականորեն մերժում էր արևմտյան ապրելակերպը: Եւ գտնում էր, որ էթն արևմտյան տեխնիկական ռազիոնալ է, ապա, դա չի կարելի ասել արևմտյան համակարգի մասին: Նրա կարծիքով, այդ համակարգը գուրկ է հոգևոր արժեքներից, մարդկային հարաբերություններն այն վերածել է ապրանքային պարզ հարաբերությունների: Խոմենյու ցանկացած համակարգը խաբսխվում

էր բարոյական սկզբունքների վրա: Նա կոպիտ վեստերիկացմանը հակադրում էր Իրանի հնագույն մշակույթը: Խումեյնի միանշանակ ժխտում ու մերժում էր նաև սոցիալիզմը, այն համարելով անասովածության վրա կառուցված և հոգևոր արժեքները ժխտող մի ուսմունք:

Խումեյնու բարոգած գաղափարների և իրական գործողությունների միջև հակասություններ երբեք գոյություն չեն ունեցել: Իմամը իսլամական ժողովրդավարության հիմք էր համարում Իրանի բոլոր քաղաքացիների ազատությունը: Նա մերժում էր բոլոր այն ուսմունքները, որոնք հաշվի չեն առնում մարդկային անհատականության դերը, մարդու հոգու աստվածային էությունը:

Իմամի քաղաքական փիլիսոփայության համաձայն, պետության մեջ հասարակական կարգը խաթարվում է, երբ մարդկանց միմյանցից տարաբաժանում ու հեռացնում է այնպիսի հիմնարար գաղափարների ընկալումը, ինչպիսիք են՝ հայրենիքը, ազգը, հարստությունը, պատիվը և այլն: Մարդը միշտ պետք է հավկարտրիմ մնա իր դավանած գաղափարներին և մեծագույն անձնագոհությամբ պաշտպանի դրանք:

Խումեյնի ազգերի և ժողովուրդների եղբայրության ջատագով էր: Դա ցայտուն երևում է նրա, այսպես կոչված, «եղբայրության խարտիայից» («Մանշուրե բարադարի»): Նա միաժամանակ լավատես էր մարդկության ապագայի նկատմամբ: Նրա խորին համոզմամբ համաշխարհային մասշտաբով մարդկությունը կարող է հասնել նպատակի միասնության, անկախ տարրեր էթնոսների միջև գաղափարական, քաղաքական, կրոնական, ազգային ու մշակութային տարբերություններից:

Չենց Խումեյնու ստեղծած քաղաքական կառույցի շնորհիվ ներկայումս ԻԻՉ տարածքում ապրող յուրաքանչյուր քաղաքացի, անկախ էրանից, թե ինչ էթնիկական խմբի է պատկանում, ինչ կրոն է դավանում, ինչ լեզվով է խոսում և այլն, օժտված է համաիրանական ընդհանրությանը պատկանելու գիտակցությամբ, այսինքն, իրեն համարում է ԻԻՉ լիիրավ քաղաքացի, կամ իրանցի: Աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ ֆարսին, հանդիսանում է ազգամիջյան շփումների հիմնական միջոցը: Այն նաև Իրանի տարածքում բնակվող ժողովուրդներից են համախմբող ու կոնսոլիդացնող կարևորագույն գործոն է:

Իրանական հեղափոխությունը տվել է բազմաթիվ դասեր: Դասերից մեկն այն է, որ գարգացող երկրների կառավարող շրջանները պետք է իրական և ոչ թե ձևական պայքար մղեն կոռուպցիայի, գանձագողության, անօրինականության և պետության հիմքերը քանդող այլ երևույթ-

ների դեմ և հատկապես լրջորեն պայքարեն աղքատության դեմ:

Մյուս դասը այն է, որ ցանկացած զարգացող երկրում «արևմտակա-նացման» և «արդիականացման» («մոդերնիզացման») չափից ավելի հախուռն ընթացքը սովորաբար պատճառ է հանդիսանում վախի և լռության պատի ճեղքվածք տալուն: Արագացված կապիտալիստական մո-դեռնիզացիան ավանդական արևելյան հասարակության մեջ որպես կանոն իր հետ բերում է բացասական գործոններ ու հետևանքներ:

Շամանակին իրանական հեղափոխությունը թե Արևմուտքում և թե Արևելքում (կոմունիստական վարչակարգ ունեցող երկրներում) գեահատվեց որպես «ավերիչ երկրաշարժ»: Հարցը միայն այն չէր, որ այդ հեղափոխության օրինակը կարող էր վարակիչ լինել իսլամական աշխարհում, այլն այն, որ համայն աշխարհում էր վարակիչ լինել իսլամական հիպերտրոֆիկացված կարծիք շահական Իրանի տնտեսական վիթխարի թոչյրի վերաբերյալ: Բացի այդ, շահը հանդիսանում էր Միջին Արևելքում արևմտադարձ ամենահուսալի դաշենակիցը: Այդ բոլորը փյվեց բառացիորեն մի քանի օրվա ընթացքում:

Հայտնի իրողություն է նաև, որ դարերի ընթացքում Արևմուտքը Արևելքում խթանել է թերաբժեղության գզգզում: Այսօր Արևելքը փորձում է իր վրայից թոքափել այդ բեռը: Իրանական հեղափոխությունը այդ առումով նս հանդիսանում է վարակիչ օրինակ: Այն ակնառու կերպով նաև ցույց տվեց, որ այն հասարակությունը, որտեղ հարստությունն ու իշխանությունը հավասարապես բաժանված չեն, չի կարող հասնել կայուն խաղաղության:

Խումեյնի գտնում էր, որ ազգեր ու ժողովուրդներ կառավարելու պարտադիր պայմանը դա՝ բացարձակ արդարության անհրաժեշտությունն է: Եզիպտական ականավոր քաղաքական գործիչ Սոհամմադ Չայքալը բերում է Խումեյնու հետևյալ ասույթը. «Եթե գոյություն ունեն հակասություններ ճշմարտության ու հանգամանքների միջև, ապա պետք է փոխել հանգամանքները և ոչ թե ճշմարտությունը»:

Գասակածից վեր է, որ իրանական հեղափոխության ազդեցության ներքո յուրե փոփոխություններ տեղի ունեցան իսլամական աշխարհի մտածողության, վարքի, ընդհանուր շափանիշների և առկա կառուցվածքներում: Սակայն դա բոլորը չէ: Իրանական հեղափոխությունը կարևորագույն ներգործություն ունեցավ մահմեդական աշխարհի վրա այն առումով, որ նրանցում ձևավորվեց իշխանության պահանջի խնդիրը: Մահմեդականների վրա իրանական հեղափոխության ազդեցությու-

ըր տեսականորեն իր մեջ պարունակում էր իշխանության շղթայական կապի խնդիրը: Այլ կերպ ասած, «իշխանության ձեռքբերման» Իրանի փորձը կարող էր բոլոր մահմեդական երկրներում առաջացնել «դոմի-տոյի էֆեկտ» կամ «շղթայական ռեակցիա», իսկ իսլամադավան զանգ-վածների մեջ իշխանության պահանջ:

Ներկայումս, երբ աշխարհը բախվել է բազմաթիվ ճգնաժամերի հետ՝ տևտեսական ճգնաժամ, ֆիզիկական և իրավական անվտանգու-թյան ճգնաժամ, բուն կենցաղային ճգնաժամ և վերջապես բանականու-թյան ճգնաժամ և կարծես թև մարդու առջև ծավալվել է մութ և աներոշ ապագան և մարդը գրկված է անդորրից, իրանական ժողովուրդը վստահ հայացքով է նայում դեպի ապագան: Այսօր Իրանը մեր տա-րածաշրջանի խաղաղության և կայունության կարևորագույն գործոնն է, բուռն թափով զարգացող երկիր:

Իրանական ժողովրդի մեծ տոնի՝ իսլամական հեղափոխության 32-րդ տարեդարձի առթիվ հայ ժողովուրդը իր բարեկամական ողջույն-ներն է հղում հարևան ու բարեկամ իրանական ժողովրդին և նրան մաղթում բարեկեցություն և նորանոր ձեռքբերումներ: Մեր երկու ժողո-վուրդները, որոնք անցել են 2500-ամյա պատմական ուղի, այսուհետև ևս շարունակելու են իրենց ձանապարհը, հավատարիմ մնալով դարե-րով ձևավորված ավանդույթին:

Resume

The phenomenon of the Iranian Revolution

Vahan Baiburtian

Almost three decades have passed since the Iranian Revolution, but the phenomenon of the event is still in the centre of the attention of the scientists, politicians and analysts from all over the world. The article states that it was a democratic revolution the huge waves of which swept away Shah's authoritarian regime, which had already exhausted its recourses.

The great role of the revolutionary leader Imam Khomeini one of the organizers and actors of the Iranian Revolution has also been brought to light in the article.

Գարիկ Քեռյան

ԵՊՀ, Քաղաքական ինտելեկտուալների
և գործընթացների ամբիոն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԻՈՒ

Սույն հոդվածում կիրթձեք ներկայացնել որոշ դիտարկումներ Իրանում քաղաքական կուսակցությունների գոյության և գործունեու-թյան մի քանի հիմնախնդիրների մասին: Գաղտնիք չէ, որ ժողովրդա-վարության կենտունակությունը կապված է բազմակարծության, այլա-խոհության, խոսքի, մատույնի և գաղափարների ազատության հետ: Գաղտնիք չէ նաև, որ այդ ամենի առկայությունը շաղկապվում է քաղա-քական կուսակցությունների գոյության և գործունեության հետ: Ներկա-յումս Իրանի Բուլսական Հանրապետությունում պաշտոնապես զրանցված և լեզավ գործող քաղաքական կուսակցություններ չկան, որն էլ իսլամական հեղափոխությունը մերժողներին հիմք է տալիս եզրա-կացնել, թե իբր ժողովրդավարությունը Իրանում այլևս գոյություն չունի: Մակայն դա այդպես չէ: Ինչո՞ւ:

Սկզբից նեթ պետք է նշել, որ շահական վարչակարգը միշտ էլ խեղդել է այլախոհությունն ու ժողովրդավարությունը: Եվ նման քաղա-քականությունը Իրանում բերոշ էր ինչպես վերջին շահին, այնպես էլ նրա նախորդներին: Եվ պատահական չէ, որ Իրանի առաջադեմ մտա-վորականներն ու ազգային քաղաքական գործիչները ստիպված էին արտագաղթել երկրից և իրենց քաղաքական գործունեությունը ծավալել վտարանդիության մեջ:

Առաջին իրանական քաղաքական կուսակցությունները ստեղծել են վտարանդիական, բուրժուա-ազգայնական մտավորականները, որոնք 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ստիպված էին արտա-գաղթել և շահական վարչակարգի դեմ պայքարելու համար կազմակեր-պություններ հիմնել և թերթեր հրատարակել արտասահմանում: Այնու-հետև 1905-11 թթ. իրանական հեղափոխության տարիներին քաղաքա-կան կազմակերպությունների թիվը երկրում կտրուկ կերպով աճեց: Նախադրյալներ ստեղծվեցին քաղաքական կուսակցությունների կազ-

մավորման համար, սակայն հեղափոխության ճնշումը կասեցրեց այդ գործընթացը: 1917 թ. հեղափոխական իրադարձությունները Ռուսաստանում նորից աշխուժացրին Իրանի քաղաքական կյանքը: Կազմավորվեց Իրանի Դեմոկրատական կուսակցությունը, որը ղեկավարում էր շեյխ Մոհամմադ Նիսաբաբին: Կուսակցությունը հանդես էր գալիս Իրանում անգլիական գերիշխանության դեմ և թավախում ապստամբություն բարձրացրեց 1920 թ.: Նույն տարում կազմավորվեց նաև Իրանի կոմունիստական կուսակցությունը, որը կառավարության հատուկ օրենքով արգելվեց 1931 թ:

Չեղապտերագմյան շրջանում Իրանում դեմոկրատական իրավունքների և քաղաքական ազատությունների ոչ լիարժեք գոյությունը նույնպես հնարավորություն չէր վեցին կուսակցությունների կազմավորման համար: Նրանց մեծ մասը ստիպված գործում էին անէզալ կամ կիսաէզալ և դեռ լիովին չկազմավորված կազմալուծվում էին՝ չկարողանալով լուրջ ազդեցություն ունենալ երկրի ներքաղաքական կյանքում: Համեմատաբար երկար կյանք ունեցավ միայն Իրանի ժողովրդական կուսակցությունը (Թուդե), որը գոյատևում է մինչև օրս: 1975 թ. ստեղծվեց Իրանի ազգային վերածննդի կուսակցությունը, որի մեջ մտան մինչ այդ գործող բոլոր քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները: Սակայն վերահաս իսլամական հեղափոխությունը այս կուսակցությանը նս դուրս մղեց քաղաքական ասպարեզից: Իսլամական հեղափոխությունից հետո արմատականորեն փոխվեց երկրի քաղաքական համակարգը և քաղաքական կյանքը Իրանում դրվեց նոր հարյուրյան վրա: Մինչև 1979 թ.-ը Իրանը սահմանադրական միապետություն էր: Դեմոտայան գլուխ կանգնած էր շահը, որը հաստատում էր պաշտամենտի (մեջլիսի) ընդունած օրենքները, կառավարության կազմը, նշանակում պրեմիեր-մինիստրին: Չեղափոխության հետևանքով 1979 թ. փետրվարին Իրանում տապալվեց շահական վարչակարգը և Իրանը հռչակվեց Իսլամական Հանրապետություն: 1979 թ. վերջերին ընդունվեց երկրի նոր սահմանադրությունը: 1980 թ. տեղի ունեցան Իրանի պատմության մեջ առաջին նախագահական ընտրությունները, իսկ մարտ-մայիս ամիսներին մեջլիսի ընտրությունները:

¹ Մինչ իսլամական հեղափոխությունը Իրանի կուսակցությունների մասին տվյալները վերցված են՝ Иванов М.С. Очерк истории Ирана, М., 1952; Его же, Иранская революция 1905-1911, М., 1957; Его же, Новейшая история Ирана, М., 1965; История Иранского государства и культуры, М., 1971.

Շատ նոր սահմանադրության, օրենսդրական իշխանությունը պատկանում է մեջլիսին, իսկ գործադիր իշխանության ղեկավարը նախագահն է: Նախագահի և կառավարության գործունեությունը վերահսկում է իսլամական հեղափոխության առաջնորդը՝ իմամը, որը բարձրագույն կրոնական և քաղաքական հեղինակությունն է երկրում: Իրանի Բալանական Հանրապետության իշխանության բուրգում որոշիչը կրոնն է: Սահմանադրությանը առաջնորդին տրված են ամենայն լիազորություններ: Նա զինված ուժերի ընդհանուր հրամանատարն է, նրան է վերապահված պատերազմի և խաղաղության իրավունքը: Առաջնորդը կարող է Գերագույն դատարանի կամ մեջլիսի պատգամավորների երկու երրորդի պահանջով պաշտոնադրել նախագահին: Առաջնորդն է կատարում նաև Սահմանադրական դատարանի կազմի ընտրությունը և տասնյակ այլ լիազորություններ իրականացնում: Նա կոչված է պահպանելու աստվածային պատվիրանները, իսլամական վարչակարգը և Իրանի անկախությունն ու տարանջային ամբողջականությունը: Նրա կամքը պարտադիր պետք է կատարեն նախագահն ու բարձրատիճան զինվորականները: Իրանը ապրում է իսլամական ավանդույթներով, իսլամացված է երկրի ողջ ներքաղաքական կյանքը: Իսլամական բնակչություն ունեցող աշխարհի ցանկացած կետում տեղի ունեցած իրադարձությունները լայն արձագանք են գտնում Իրանում:

Իսլամական հեղափոխության հաղթանակով նշանավորվեց Իրանի քաղաքական պատմության զարգացման նոր փուլը: Շահական վարչարգի տապալումից հետո որոշակի պայմաններ ստեղծվեցին քաղաքական կուսակցությունների գործունեության համար: Չեղափոխության առաջնորդ այաթոլլահ խոմենիի հավանությամբ մի խումբ իրանցի կրոնա-քաղաքական գործիչներ հիմնադրեցին Իսլամական Հանրապետական կուսակցությունը (ԻՀԿ): Կուսակցության հիմնադիրների ծրագրային հայտարարության մեջ նշվում էր, որ նրա հիմնական նպատակն է իրանական հասարակության բազմակողմանի իսլամացումը, իսլամական տնտեսական և քաղաքական կառուցվածքների ստեղծումը, արևմուտքի ազդեցության վերացումը: ԻՀԿ-ի կարգախոսը հռչակվեց «Իրանկանացիներ խոմենիի կուրսը»: ԻՀԿ-ի կարգախոսով կուսակցության մեջ ընդգրկվեցին մեծ թվով անդամներ բնակչության կրոնական տրամադրություններ ունեցող միջին խավերից: Կուսակցությունը արագ կերպով աճեց և իր կազմակերպություններն հիմնեց բոլոր մարզերում: ԻՀԿ-ի առաջնորդները հնարավորություն ստացան զլխավոր

դերը կատարել 1979 թ.-ի եռր սահմանադրության մշակման և ընդունման ժամանակ: Բացարձակ մեծամասնություն ևվաճելով 1980 թ. ընտրություններում, ԻԿԿ-ն դարձավ կառավարող կուսակցություն: Հեղափոխությունից հետո իր լեզավ գործունեությունը վերսկսեց կոմունիստամտու Իրանի Ժողովրդական կուսակցությունը (Թուզե), որն իր պատրաստակամությունը հայտնեց շիա ինդոնեզականության հետ համագործակցելու և հեղափոխության շահերը պաշտպանելու ուղղությամբ: Հիմնվեցին նաև մի շարք այլ քաղաքական կազմակերպություններ: Սակայն միջազգային իրադրության սրումը, Իրանի սուբ հակամարտությունը արևմտյան պետությունների և Իրաքի հետ, ներքաղաքական իրավիճակի կայունացման և իսլամական պետության մարպելման անհրաժեշտությունը ստիպեց իշխանություններին 1983 թ. արգելել քաղաքական կուսակցությունների գործունեությունը:

Ներկայումս Իրանում օրինակելու են գործող և գրանցված կուսակցություններ չկան: Բայց այս հանգամանք ամենևին չի եշանակում, թե Իրանում քաղաքական կյանքը մեռած է և բազմակարծությունը արգելված է: Տպագրվող պաշտոնական և ոչ պաշտոնական պարբերականներում կարելի է հանդիպել քաղաքական բնույթի բազմաթիվ հոդվածների, որոնք տարբեր տեսակյուններին վերլուծում են կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը՝ ավելի հաճախ քննադատական դիրքերից: Բայց իսլամական ավանդույթներով ապրող Իրանում դրվածքն այնպիսին է, որ քաղաքականությամբ զբաղվող գործիչները և մամուլը իրենց գործունեության ժամանակ իրավունք չունեն շեղվելու իսլամական հեղափոխության գաղափարախոսությունից: Ամեն տեսակ հասարակական-քաղաքական գործունեություն էրբեր չպետք է հակադրվի իսլամի առաջադրած սկզբունքներին: Այն նաև պետք է համընկնի հեղափոխության առաջնորդի նախանշած ուղուն (այաթոլլայի իմունեյնի մահից հետո առաջնորդ դարձավ այաթոլլայի նամենեին):

Իրանի Իսլամական Հանրապետության ներքաղաքական կյանքի թերևս ամենանշանավոր իրադարձությունը, որի ընթացքում ի հայտ են գալիս քաղաքական ուժերը, նախագահական ընտրություններն են: Օրինակ, վերցնենք 1993 թ. իունիսի նախագահական ընտրությունները: Ընտրապայքարին մասնակցելու համար դիմել էին 128 անձ: Սահմանադրության պահապան խորհուրդը 124-ի թեկնածուությունը մերժեց և ընտրություններին մասնակցելու հնարավորություն ստացան միայն

չորսը՝ Աբդոլլահ Ջաֆին, Ամնադ Թավաբոլին, Ռաջաբ Ալի Թահերին և Հաշեմի Ռաֆսանջանին: Չորս թեկնածուները ի հանդես եկան որպես անկային և անկուսակցական, սակայն նրանց շուրջ ձևավորվեցին քաղաքական նախաընտրական խմբավորումներ: Թեկնածուները իրենց աշխարհայացքով և գաղափարներով շատ մոտ էին միմյանց: Նրանք արած ծրագրային հայտարարությունների առանցքը կազմում էին սոսկետության վերակենդանան և արտաքին քաղաքականության հանգուցային հարցերը: Առանձին ուշադրություն էր դարձվում ԱՄՆ-ում ստեղծված և Իրանին պատկանող դրամական միջոցների վերադարձմանը: Թեկնածուներին և ոչ մեկը իր հեղինակությամբ և ժողովրդականությամբ չէր կարող մրցել Ռաֆսանջանիի հետ, որն Իսլամական Հանրապետության պրեզիդենտն էր 1989 թ.-ից:

Ընտրություններից հետո հրապարակված պաշտոնական տվյալների համաձայն, ընտրական ձայնի իրավունք ունեցող իրանցիներից ընտրություններին մասնակցեցին 56 ավուր: Քվեարկողների 63 տոկոսը վերընտրեց Ռաֆսանջանիին, 24 տոկոսը զերադասեց Ամնադ Թավաբոլին, որը երկու տարի վարել էր Աշխատակրի և առցիպական հարցերի մինիստրի պաշտոնը: Իսկ մյուս երկու թեկնածուները՝ Ջաֆին և Թահերին հավաքեցին աննշան թվով ձայներ: Այսպիսով, Իրանի Իսլամական Հանրապետության վեցերորդ նախագահ վերընտրվեց Ռաֆսանջանին:

Չնայած Ռաֆսանջանին համոզիչ հաղթանակ տարավ ընտրություններում, հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ նա լուրջ ընդդիմություն ունի մեջլիսում: Քաղաքական պայքարը տեղափոխվեց խորհրդարան: Դա ցայտուն երևաց այն ժամանակ, երբ մեջլիսը սկսեց քննարկել Ռաֆսանջանիի ներկայացրած կառավարության կազմը: Իրանի նախագահը մեծ ղվարությամբ կարողացավ պաշտպանել կառավարության նոր կազմը: Դեռ քվեարկությունից առաջ պահանջողական մեծամասնության պահանջով նա փոխեց վեց նախարար և կատարեց մի շարք վերադասավորումներ: Մեջլիսում քվեարկության ժամանակ, որը տեղի ունեցավ օգոստոսին, Ռաֆսանջանին տրամադրված էր բավականին վճռականորեն և չէր ցանկանում առանց մարտի հանձնել և ոչ մի թեկնածություն: Պատգամավորների կողմից կատարված քննադատական դիտողությունների մեծ մասը նա անվանեց անխիմ և անարդարացի, իսկ մեջլիսի կողմից մերժված Տնտեսության և ֆինանսների նախարար Մոհսեն Նուրբախշիին անմիջապես եշանակեց մի այլ

կարևոր պաշտոնի՝ փոխնախագահ տնտեսական քաղաքականության գծով: Ընտրություններից հետո տեղի ունեցած այս քաղաքական բախումների պատճառն այն էր, որ մեջլիսի պահպանողական մեծամասնությունը աշխատում էր վերահսկողության տակ պահել կառավարության գործունեությունը և իր ներկայացուցիչներին մտցնել այնտեղ:

1993 թ. նախագահական ընտրություններին և դրան հաջորդող իրադարձություններին հետևելով կարելի է եզրակացնել, որ թեկնածուների շուրջ ձևավորված քաղաքական խմբավորումները դրանք փաստացի քաղաքական կուսակցություններ էին, որոնք վարում էին առողջ մրցակցային պայքար:

Ազատ քաղաքական մրցակցությունը Իրանում առկա էր նաև հետագայում: Ընտրությունից-ընտրություն ավելի է զարգանում քաղաքական բանավեճի մշակույթը: 2000թ. փետրվարին Իրանում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Պայքարը գեղում էր բարեփոխումների կողմնակիցների և պահպանողականների միջև: Նոր նախագահ Խաթամիի կողմնակիցները բարեփոխումների հետևողների մեջ էին: Հետագա ընտրությունները, թե նախագահական, թե խորհրդարանական, նույնպես անցան բազմակարծության մթնոլորտում: Նախագահ Ահմադինեժադը երկու անգամ էլ ընտրվել է մրցակցային պայքարով և նրան ընդդիմադիր քաղաքական ուժերը միշտ էլ հնարավորություն են ունեցել ազատորեն մասնակցել քաղաքական պայքարին: Ամփոփելով կրկին նշենք, որ Իրանի Իսլամական Հանրապետությունում քաղաքական կուսակցությունների գործառույթները այսօր իրենց վրա են վերցրել մեջլիսի քաղաքական խմբակցությունները և նախագահական թեկնածուների շուրջ համախմբված քաղաքական ուժերը: Այնպես որ ժողովրդավարության ոգին Իրանում պահպանվում է և պետք է անպայման հարգել քաղաքական համակարգի այն մոդելը, որն ընտրել է իրանական ժողովուրդը հեղափոխությունից հետո:

Резюме

Политические партии в Иране

Гарик Керян

В начале 20-ого века, во время антимоноархических революционных движений в Иране формировались политические организации и партии. Демократическая партия Ирана в 1920 году возглавила восстание против английского господства. В 1975г. была создана Партия Национального Возрождения.

После исламской революции 1979г. группа религиозно-политических деятелей создала Исламскую Республиканскую партию. ИРП выразила готовность сотрудничать с шиитским духовенством в интересах укрепления национальной независимости страны, обеспечения демократических прав.

Обострение политической ситуации и международного положения Исламской Республики Иран, вынудили властей в 1983г. запретить все политические партии. Несмотря на это, демократические принципы в политической жизни Ирана сохраняются. Политическое окружение кандидатов в президенты и парламентские фракции взяли на себя функции политических партий.

*С. Маркарян
ЕГУ кафедра иранистики*

МЕЖДУНАРОДНОЕ ВЛИЯНИЕ НА СИТУАЦИЮ В РЕГИОНЕ ИРАНСКОЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ 1979 Г.

Иранская исламская революция 1979 г. вызвала к жизни оживление в политической жизни региона и ее влияния на свои страны опасались многие монархи арабских и других стран Ближнего Востока и зоны Персидского залива. Возникшая на волне протеста против американизма и вестернизации всех сторон жизни иранского общества, иранская революция 1979 г. создала концепцию внешней политики выраженную формулой "Ни Запад – ни Восток" а "диалог цивилизаций" как основная концепция внешней политики. Уже осенью 1979 г. Исламская Республика Иран предложила всему мировому сообществу эту концепцию международных взаимоотношений через различные органы ООН. Во времена "холодной войны" международный климат во многом определялся взаимоотношениями двух великих держав – США и СССР.

Многие страны Азии и Европы, не говоря уже о других регионах, мало влияли на международную жизнь. Неприсоединившиеся государства уже с Бандунгской конференции 1955 г. заявили о своих претензиях на увеличение их роли и участия в международной жизни в соответствии с тезисом ООН о полном равенстве всех стран на международной арене¹. Однако этот тезис стал наполняться реальным содержанием для Ирана только после исламской революции 1979 г. Характерной особенностью внешней политики ИРИ стало идеологическое наполнение принципов и действий международной жизни исламским содержанием, исламской солидарностью и стремлением к возрождению шиитского ислама не только в Иране, но и в соседних странах – Ираке, Сирии, Ливане, Афганистане. Около 80% мусульман в мире причисляются к суннизму, а шиитов не более 10% всех мусульман, но идеологическая, международная и культурная активность шиизма за последние 30 лет позволяет ему занимать лидирующие позиции в исламском мире. Этому способствовала и доктрина универсального религиозно-этического содержания – "веляте факих"².

¹ Агаев С. Л., Иранская революция, США и международная безопасность. М., 1986, с. 212.

² Агаев Г. П., 25-летие победы исламской революции в Иране и вопросы региональной безопасности // <http://www.znat.ru/archive/1.1.1.11.2.2006/>, с. 7-8.

Массы обездоленного и потерявшего надежду на лучшее будущее мусульман в Палестине и Малайзии, Индонезии и Бангладеш, в Египте и Иордании (мостазафины) с большим энтузиазмом восприняли идеи анти-американизма¹, борьбы с ограблением других стран США и их союзников, о которых очень образно стал говорить после 1979г. аятолла Хомейни. Западная и в первую очередь американская пресса и политические деятели с большой тревогой стали говорить с 1979г. и по сей день об угрозе экспорта исламской революции иранского типа в соседние мусульманские страны и даже отдаленную окраину исламского мира. Однако активная поддержка Ираном палестинского движения сопротивления через организации "Хезболла", "Аль-Акса", "Хамас", "Фатх" тем не менее не привела к созданию второго исламского теократического государства в Палестине и не только из-за противодействия этому Израиля и США, а, видимо, и потому что принимая помощь ИРИ и сотрудничая с ней, тем не менее все эти организации стремятся к созданию светского государства арабов Палестины². Это опровергает тезис западных политологов о том, что Иран стремится распространить свою модель общественно-политического устройства на соседние страны. Несмотря на самые тесные отношения с Сирией и Кувейтом, ОАЭ и Оманом то же самое следует из отношений Ирана с этими государствами. Можно сказать, что активность на международной арене и многие идеи о возрождении ислама, но в шиитском варианте не навязываются силой или под давлением экономических, торговых или военных рычагов воздействия, а предлагаются на основе свободного обмена мнениями всем мусульманским странам. Тем не менее, США причислили Иран к "оси зла" и обвиняют в поддержке международного терроризма³. Аргументов для столь крайнего суждения очень мало, а Бен Ладен и его сподвижники действовали в Афганистане и Судане, Пакистане и Саудовской Аравии, но никак не в Иране. Поддержка Палестинского движения сопротивления Ираном не может рассматриваться как поддержка терроризма, хотя бы потому, что не все палестинские организации используют террор в политической борьбе.

Важное место во внешнеполитической доктрине Ирана занимает борьба за признание его одним из полюсов многополюсного современного мира. В иранском историческом сознании твердо отложились штампы о великом прошлом, об имперской сути иранского государства, об особой мессиянской роли страны в Азии и на огромном пространстве "Ираншахра" – "Иранской ойкумены" от Тигра и Евфрата до Сыр Дарьи и высот Памира,

¹ Ислам в современной политике стран Востока. М., 1989, с. 127-129.

² Агаев Г. П., 25-летие победы исламской революции в Иране и вопросы региональной безопасности // <http://www.znat.ru/archive/1.1.1.11.2.2006/>, с. 8-9.

³ <http://www.znat.ru/archive/1.1.1.11.2.2006/>, с. 2-3.

т.е. везде где понимают и воспринимают иранскую культуру и язык. После окончания "холодной войны" теория многополюсного мира получила развитие в виде создания БРИК – объединения Бразилии, России, Индии и Китая, которое позиционирует себя как еще один "полюс" в многополюсном мире. Возникает логичный вопрос, – а почему Пакистан, обладающий ядерным оружием, не столь явно претендует на лидерство в мусульманском и вообще "третьем мире", в то время как у Ирана ядерного оружия нет, а на роль лидера, еще одного "полюса" в мире он претендует. Ответ, возможно, нужно искать в идеологии низизма, призывающей вернуться к чистоте первоначального ислама, что и будет его истинным возрождением.

Многополюсность современного международного порядка – один из краеугольных камней и основных принципов иранской внешней политики. Следует отметить, что после революции 1979 г. авторитет в международной политике значительно возрос и голос иранских дипломатов стал слышен и в Западной Африке, и в Малайзии, и Индонезии и во многих арабских странах. Во всех этих странах имеется значительное число индустриальных и безработных людей, которые с большим энтузиазмом воспринимают идеи равенства народов и личности, идеи борьбы с разлагающим обществом влиянием США и Европы, о которых говорят различные иранские лидеры. Антиамериканизм как культурно-политический протест против неравенства стран и народов в международных делах стал настоящей платформой для солидарности с Ираном. Многие мусульманские страны южной Азии и Африки, ощутившие себя третьестепенными субъектами международной жизни, почувствовали, что в борьбе Ирана за один из полюсов мира и они могут предъявить мировому порядку свои претензии на равенство и уважение.

Свою ущербность и несоблюдение прав на международной арене великими державами очень ревниво воспринимают многие страны. Среди "великих" раньше были победители фашистской Германии – СССР, Англия, США, Франция и Китай, – а после появления атомного оружия у Пакистана и Индии, стало не очень понятно кого-же еще причислять к этим "великим" и почему не может быть других "великих". При этом последние столетия всемирной истории характерны постоянным отступлением ислама в геополитическом аспекте, уступкой одной позиции за другой. Иранские дипломаты и политические деятели умело акцентируют внимание мусульманской части планеты на необходимости активной наступательной позиции в международных делах и более тесной консолидации позиции всех стран ислама. В тех странах, где светская власть имеет прочные позиции, эта идея воспринимается на уровне обсуждения. Там же где духовные лидеры и улама пользуются большим авторитетом (Афганистан, Бангладеш, Малайзия, Мали, Нигерия) позиция по объединению усилий и возмож-

ностей стран мусульманского цивилизационного блока находит понимание, сочувствие и, как результат этого, конкретные предпринимаются шаги к объединению исламских стран.

Особые отношения на международной арене складываются у Ирана с Россией и Китаем. Что касается Китая, то он нуждается в экспорте иранской нефти и постоянно наращивал его в 90^{ые} гг. XX в. В конце 90^а гг. и в начале XXI в. этот экспорт достиг своего максимума – 41 млн. тонн в год, а в годы кризиса 2008-2010 гг. он упал до 29 млн. тонн – 30 млн. тонн в год. Но нет сомнений, что выходящий из кризиса Китай в ближайшее время снова нарастит свой экспорт нефти из Ирана – китайская экономика нуждается в иранской нефти и никакие широкомасштабные санкции экономического характера против этой страны, которые предлагают ввести США и их союзники, скорее всего не будут поддержаны в Пекине. Достаточно вспомнить тот факт, что по итогам экономического развития в 2010 г. ВВП Китая вышел на второе место в мире после американского. А поставки арабской нефти на мировой рынок в связи с цепной реакцией перманентных революционных событий в Тунисе, Египте, Ливии и других арабских странах за последние недели, делают весьма сложными и проблематичными экономические связи с ними. Китаю не остается никакого другого пути – нефть из Индонезии и Ирана составляет основную часть поставок в эту страну.

Традиционно в добрых отношениях находились отношения СССР, а с 1992 г. – России с Ираном. Россия имеет много общих вопросов для решения в регионе Каспийского моря и схожие позиции с Ираном по поводу справедливого раздела подводных богатств этого моря и неплохо развивающиеся экономические связи с ИРИ.

Не надо забывать, что именно Россия завершила строительство атомной электростанции в Бушере и готова обслуживать этот объект. Во взаимоотношениях Запада и США с ИРИ за последние годы резко возросла роль России как посредницы в переговорном процессе. Этому способствует то, что на Западе чаще всего не понимают и не хотят слышать лидеров сегодняшнего Ирана или, что еще хуже, пытаются говорить с ними свысока, тоном диктата и назидательности, который категорически не воспринимается иранскими лидерами. Россия сумела выдержать более равный диалог с Ираном за последние два десятилетия, что делает ее одним из главных партнеров ИРИ на международной арене. Не надо забывать и о совместных экономических проектах – есть принципиальная договоренность между этими странами о создании транспортного коридора "Север-Юг", об участии России в строительстве железной дороги от иранской границы до г. Еревана, о разработке проектов новых атомных электростанций для Ирана и строительстве из Армении новой линии электропередач. Ведь не

секрет, что Армения сегодня распахивается с Ираном за газ и газопровод поставками электроэнергии, которой в северном Иране заметно не хватает, а это экономически один из наиболее развитых районов на иранской территории. В этой связи региональное значение приобретает строительство нефтеперерабатывающего завода в Мегри, соглашение о начале строительства которого месяц назад было достигнуто между правительствами Армении и Ирана.

Еще одним "полюсом" мирового политического и экономического порядка пытается подать себя Саудовская Аравия. Эта страна претендует на явное лидерство в арабском мире и благодаря патронажу над святыми местами мусульман – Меккой и Мединой – на лидерство также и среди всех мусульман мира. Однако шиитские авторитеты объявили ваххабизм Саудовской Аравии вообще еретическим и даже не исламским учением и это сильно отравляет отношения Ирана с Саудовской Аравией¹. Особые подозрения у Саудовской Аравии вызывают теплые и дружественные отношения Ирана с арабскими странами – Сирией, Ливаном, Оманом, ОАЭ, Йеменом. А у Ирана подозрения в отношении Саудовской Аравии в значительной степени связаны с тесным военно-экономическим сотрудничеством этой страны с США и с размещением американской военно-воздушной базы в этой стране.

Явно антиамериканский характер внешней политики Ирана после революции 1979 г. по сей день приводит и к неприятию иранскими политиками продвижения НАТО на восток. В этом вопросе иранские политики не раз выражали солидарность с позицией России. В Иране среди экспертов и политиков популярна идея о том, что если НАТО оборонительный союз центральноевропейских держав, то там же и должна проходить граница этого союза.

Важнейшим принципом внешней политики современного Ирана является отказ от территориальных претензий к своим соседям. За последние 500 лет своей истории, начиная от эпохи Сефевидов и кончая династией Пехлеви, Иран неоднократно претендовал на Гератскую область Афганистана, туркменские земли выше р. Атрек, весь Белуджистан, шиитские районы южного Ирака и другие районы. Исламская республика сегодня старается развивать экономическое и политическое сотрудничество с соседями в регионе и отказалась от всяких территориальных претензий. При этом в Иране существует четкое понимание необходимости эффективного противодействия пантюркизму в регионе, что сближает его позиции с пониманием Армении агрессивности этого политического учения. Иран развивается с независимой Арменией добрососедские отношения, основан-

ные на экономическом интересе. Достаточно вспомнить успешно завершившийся в 2009 г. проект строительства магистрального газопровода, позволяющий Армении получать 1 млрд. м³ иранского газа в год. По иранским масштабам при транспортировке 10 млрд. м² в Турцию и 21 млрд. м³ в Европу возможно это и немного (3-4% иранского газа), но для Армении весьма важно¹. Важна также позиция Ирана в урегулировании нагорно-карабахского конфликта. Исламская Республика Иран неоднократно заявляла о недопустимости новой войны в регионе южного Кавказа и необходимости решать все проблемы только путем мирных переговоров.

До сих пор Иран ведет борьбу за размораживание своих авуаров в американских банках – известно, что в 1980-1982 гг. США приняли ряд законов, по которым содержащиеся в американских банках нефтедоллары Ирана объявлены замороженными и неизветно даже их точное количество – называются шифы от 60-70 млрд. долларов до 200 млрд. долларов, однако никто точно не может озвучить шифру.

США в начале XXI в. неоднократно угрожали Ирану военным нападением, требуя свернуть программу строительства атомной электростанции в Бушере. Станцию достроили, а ядерные опасения США в отношении военного использования атомной энергии пока не оправдались. Следует отметить также резко увеличившиеся контакты Ирана с Туркменией, Таджикистаном и Узбекистаном. Причем если из Туркмении Иран транспортирует газ в Европу, то с Таджикистаном и Узбекистаном отмечается больше культурно-политическое сотрудничество.

В заключение отметим, что внешнеполитическая активность Ирана за последние 30 лет позволяет поставить его в ряд региональных супердержав, претендующих на более видную и политически весомую роль в регионе, среди ираноязычных стран и во всем мусульманском мире. Активность Ирана в Западной Африке и Латинской Америке (сотрудничество с Бразилией, Аргентиной и Мексикой) позволяет говорить о новых горизонтах более высокого уровня международной активности, чем при шахе. Внешняя политика ИРН носит активный и более многовекторный характер, чем это было при шахе. Только отношения с Китаем и Японией являются наглядной иллюстрацией того, как можно успешно развивать торгово-экономическое и культурно-дипломатическое партнерство на основе "диалога культур", вопреки конфессиональным и культурным различиям.

¹ Шарникова Р. М., Современные богословские концепции "исламского государства" // Сб. ст.: Зарубежный Восток. М., 1985, с. 95-96.

¹ Рождественская Д. С., Внешне экономические связи Исламской Республики Иран (ИРИ) с развитыми странами // Сб. ст.: Иран. История и современность. М., 1989.

Resume

International impact on the external position of Iran during the Islamic Revolution in 1979

Samvel Markaryan

The revolution in Iran rose activities in political field in the country in 1979. This revolution threw down a challenge to US and westernization in the international scene. Instead of western political concept a new approach such as 'Not West neither East' was accepted. Here is important to mention that Iran spoke in support of all states equality in the world and employed the theory 'civilizations dialog is peace foundation'. Iran significantly increased the influence on external political situation during last 30 years and Iranian diplomacy started play active role in Africa, South Asia and the Far East for the last 500 year of its history. Iran gave a proposal of a new world order where the multipolar system took place. This order supposes to take into account interests both big and small states of the world. Good neighborly intercourse between Armenia and Iran allows developing mutually beneficial international economic cooperation. In addition Iran does not have territorial claims to neighborhood countries that contribute to wider cooperation with Turkmenia, Uzbekistan, Afghanistan and Tajikistan.

Ռուդիկ Յարայան
ԵՊՀ իրանագիտության ամբիոն

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆԵՐԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱՍՏԱԵՐԶԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՐՍՈՒՄ

Որպեսզի հասկանանք Իրանի իսլամական հեղափոխության նշանակությունը տարածաշրջանային անվտանգության համատեքստում, անհրաժեշտ է նախևառաջ քննարկել իսլամական քաղաքական գործունի դերակատարումն իրանական հասարակության կազմակերպման հարցում, այնուհետև վերլուծել իսլամական քաղաքական գաղափարախոսության այլ արժեհամակարգերի հետ համատեղելիության խնդիրը միջպետական հարաբերությունների մակարդակում: Հիմնականում այս երկու կարևորագույն գործոններն են բացահայտում Իրանում իսլամական քաղաքական գործընթացների նշանակությունը՝ ուղղված տարածաշրջանի խաղաղ, կայուն զարգացմանն ու անվտանգության համակարգի պահպանմանը:

Վերոհիշյալ հարցի առաջին մասի պատասխանը կարելի է գտնել 1978-1979թթ. Իսլամական հեղափոխությունից ցայսօր ընկած ժամանակահատվածում՝ Իսլամական Հանրապետության գոյատևման շուրջ երեսուն տարիների դժվարին ճանապարհին, որի ընթացքում իսլամական քաղաքական գործընթացը հանդես է եկել որպես իրանական հասարակության զարգացման և առաջընթացի միակ և անփոխարինելի գաղափարախոսություն: Այդ տարիների ընթացքում աշխարհում փոխվեց ԻԻՀ նկատմամբ վերաբերմունքը, որը մեծապես պայմանավորված էր իսլամական քաղաքական մոդելների շարժունակությամբ, ինչպես նաև կենսունակության անվիճելի հատկանիշներով: Ինչպես նշում է Ի. Մուրադյանը, «Արևմուտքի հայացքն ուղղված Իրանի իսլամական հեղափոխությանը, որպես տափակ և անհամ ազգայնականության, արագորեն փոխվեց, և Արևմուտքը հասկացավ, որ գործ ունի բավականին խորը հասարակական-քաղաքական երևույթի հետ»¹:

¹ Մուրադյան Ի., Իմամ Ռոմեյնի և Իրանի արտաքին քաղաքականության գաղափարախոսությունը, Իմամ Ռոմեյնի - 100, Իրանի իսլամական հեղափոխության առաջ-

Մակայն հարկ է նկատել, որ իսլամական քաղաքական գործընթացների ընդլայնումն ու հանրաճանաչությունն անհնարին կդառնար, եթե դրա հիմքում չլիներ կրոնական գաղափարախոսությունը, որն առավել մատչելի է հասարակական ընկալման տեսանկյունից: ԻԲ2-ն առաջնային կարևորություն է տալիս իսլամական հոգևոր-մշակութային արժեքների քարոզչությանը երկրի ներսում և նրանից դուրս, որը տարածաշրջանային անվտանգության պահպանման հրամայականը կրթական ընկալումից տեղափոխում է հոգևոր դաշտ՝ հնարավորինս մերձենալով մարդկային հոգեկենտրոնացման, քանզի ինչպես ասում են, մարդու էությունն իր հավատն է, հավատն Աստծո, իր ազգի, գաղափարի, սպազային նկատմամբ: Առանց հավատի մարդը վերածվում է վտանգավոր տարրի, որը քայքայում է հանրությունը, սպանում սինեթզիզը և ժխտում համակեցության կանոնները: Առանց հավատի հնարավոր չէ կառուցել ներդաշնակ հանրություն, քանզի ինքը թեզ հետ համաձայնության գալիս անհնարին է դառնում¹:

Կասովարման իսլամական մոդելների հանրաճանաչությունը բացատրվում է նաև արտաքին գործոններով՝ մի շարք արևելյան երկրներում արևմտյան արդիականացման մոդելների ճգնաժամով, սոցիալիստական ուղին ընտրած պետությունների անտեսական հետամանցությամբ, այնուհետև սոցիալիստական գաղափարախոսության տապալմամբ, որոնք զրկեցին կրունիզով կառուցելու գաղափարները գրավչությունից², իսլամադավան հասարակությունների գարգացման այլընտրանքային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցմամբ և այլն:

Սույնից բարդանում է միջպետական և տարածաշրջանային հարաբերությունների ոլորտում, որտեղ իսլամական քաղաքական գաղափարախոսությունը հակասական արձագանքներ է գտնում այլ քաղաքական համակարգերի գաղափարախոսական խաչմերուկներում: Հիրավի, իսլամական քաղաքական գործընթացի վերաբերյալ արտահայտվող կարծիքներն ու զնահատականները խիստ տարբեր են, սակայն համաշխարհային խաղաղոգների գերզգայուն վերաբերմունքն ԻԲ2-ին

1 Լոյդ և Իլնանդի իմամ Խունկու մտքերի և հայացքների քննարկմանը նվիրված գիտա-մոդուլի կուրսերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ, 1999, էջ 24:

² Մարգարյան Ս., Ինչպե՞ս իրավասանելի եղափոխություն, 21-րդ դար, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2(16), Երևան, 2007, էջ 161:

³ Лускянов А. К., Исламизация в Иране (проблема власти), Мусульманские страны: религия и политика (70-80 года), сборник статей, Москва, 1991, с. 160-161.

աննչվող իրադարձությունների նկատմամբ վկայում է իսլամական քաղաքական գործունի մրցունակությունը, որը կարող է համախմբել մեծաքանակ մարդկային զանգվածների և ազդել միջազգային հարաբերությունների վրա:

Վերոհիշյալի համատեքստում հատկանշական է նաև, որ Բրանում իսլամական քաղաքական գործընթացը միտված է մուսուլմանական երկրների սոցիալ-քաղաքական և կրոնամշակութային ընդհանուր խնդիրների լուծմանը՝ վերագրային գաղափարների շեշտադրմամբ: Հատկանշական է, որ վերջին տասնամյակների վերլուծությունը միայն հաստատում է իսլամական գործոնի հարաբերական կայունությունն իսլամադավան հասարակությունների քաղաքական համակարգերում:

Բայց, միաժամանակ, հարկ է նկատել, որ տարբեր մուսուլմանական երկրների պետական համակարգերում իսլամական քաղաքական գործընթացը չունի միատեսակ արտահայտչականություն. դա առաջին հերթին պայմանավորված է առանձին պետությունների նեղ ազգային ռազմաքաղաքական շահերով, որոնք փորձում են համապատասխանեցնել իսլամական կրոնաքաղաքական փիլիսոփայությանն ու հոգեմտածելակերպին: Ուստի իսլամադավան հասարակություններում տարածաշրջանային անվտանգության խնդիրների քննարկումն անհրաժեշտ է կատարել ազգային, մշակութային, տնտեսական և աշխարհագրական առանձնահատկությունների վերլուծության սահմաններում՝ հաշվի առնելով իսլամական գործոնի ազդեցությունն ու կարևոր դերակատարումը:

ԻԲ2-ը հանդիսանում է Մեծ Մերձավոր Արևելքի խոշորագույն պետություն, որը նշանակալի դեր է խաղում միջազգային հարաբերություններում և տարածաշրջանային անվտանգության պահպանման ոլորտում: Երկիրը տիրապետում է հարուստ բնական պաշարների, մասնավորապես՝ էներգետիկ բնույթի, գրավում է առանձնահատուկ կարևորության աշխարհաքաղաքական դիրք Կովկասի, Միջին Ասիայի և Պարսից ծոցի միջև: Այս բնական-աշխարհագրական առավելություններն ամրոջանում են իսլամական կառավարման գաղափարախոսությամբ որպես իրանական հասարակության հոգևոր ու մշակութային արժեքների պահպանման, քաղաքական և տնտեսական առաքելացի կարևորագույն խթան, որն ուղղորդում է իրանական հասարակության զարգացման գործընթացները, կանխորոշում Բրանի դերը տարածաշրջանային հարաբերություններում:

Իրանում կառավարման իսլամական մոդելի կիրառումը կարող է համարվել արդարացած, քանզի այն առաջարկում է իրանական հասարակության զարգացման այլընտրանքային և ինքնուրույն գաղափարախոսական ուղղություն, որը միաժամանակ, քաղաքական և գաղափարախոսական նոր սկզբունքներ է ներմուծում տարածաշրջան, վերացնահատում միջպետական հարաբերությունները՝ չխախտելով տարածաշրջանային անվտանգության սկզբունքները: Իրանում իսլամական գաղափարախոսության ամրապնդման հարցում կարևոր նշանակություն ունեցավ ԻԻՀ էներգետիկ պաշարների առկայությունը, որի շնորհիվ հասարակական զարգացման հիշյալ այլընտրանքային մոդելի իրականացման համար ստեղծվեց որոշակի կուրսական հիմք:

Իսլամական Հանրապետության շուրջ երեսուց և արհեստի գոյությունը փաստում է այն իրողությունը, որ իսլամական քաղաքական գործընթացներն Իրանում միտված չեն մեկուսացնելու երկիրն արտաքին աշխարհից, և անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին է արտաքին աշխարհի վերաբերմունքն Իրանի նկատմամբ՝ Իսլամական Հանրապետությունը եղել է մնում է որպես մերձավորարևելյան քաղաքականության հիմնական դերակատարներից մեկը: Հատկանշական է նաև, որ Իրանը հավանական է դառնալ իսլամական աշխարհի քաղաքական և գաղափարախոսական առաջատարներից, ուստի վերոհիշյալի համատեքստում բնական էն դիտվում ԻԻՀ ձգտումներն՝ ուղղված հնարավորինս ակտիվ տարածաշրջանային համագործակցության և հակամարտությունների կարգավորման:

Իսլամական աշխարհում պատշաճ դիրք գրավեցնելու Իրանի նպատակները նոր որակ են հաղորդում տարածաշրջանային խնդիրներին՝ արժեքներով իսլամական մոդելների կիրառման անհրաժեշտությունը տարածաշրջանային անվտանգության համակարգում: Մյուս կողմից՝ ԻԻՀ էներգետիկ ներուժը և աշխարհագրական նպաստավոր դիրքը խթանում են, որ երկիրը հայտնվի աշխարհատնտեսական պայքարի կիզակետում: Երկու գործոններ, որոնք ուղղակիորեն նպաստում են Իսլամական Հանրապետության տարածաշրջանային և աշխարհաքաղաքական դերի կարևորմանը:

Այսօր իսլամական քաղաքական գործընթացների կենտունակությունն Իրանի ներքին և արտաքին քաղաքականության հաջող իրականացման տեսանկյունից մեծապես պայմանավորվում է ԻԻՀ միջուկային ծրագրերով: Իրանը շարունակում է խաղաղ նպատակներով միջու-

կային տեխնոլոգիաների զարգացման քաղաքականությունը՝ այն համարելով տարածաշրջանում անվտանգության և ուժային հավասարակշռության պահպանման հրամայական: Այդ համատեքստում ուշագրավ են ԻԻՀ կազմակերպած բազմաթիվ միջոցառումները, որոնք կոչված են ամրագրելու իրանական ժողովրդի անքակտելի իրավունքները միջուկային ծրագրերի շրջանակներում: Հիշյալ միջոցառումների շարքին է դասվում նաև 2007թ. Իսլամական հեղափոխության տարեդարձի առթիվ նախագահ Մ. Ահմադինեժադի նախաձեռնությամբ կազմակերպված տոնախմբությունը՝ նվիրված խաղաղ նպատակներով միջուկային տեխնոլոգիաներ զարգացնելու Իրանի օրինական իրավունքին:

Տարածաշրջանում ուժային հավասարակշռության պահպանման կարևոր գործոն է նաև ԻԻՀ պայքարն ընդդեմ համաթուրքականացման: Այդ տեսանկյունից, ինչպես իրավագիտորեն նկատում է Վ. Ն. Շելևը, Իրանի համար առանձնահատուկ նշանակություն ունի հակաթուրքական և հակաադրբեջանական քաղաքական կազմակերպումը¹, որը փչրում է ԻԻՀ-ը որպես սույն գաղափարականացված համակարգ ներկայացնող բոլոր կարծառիակները: Այդպիսով հաստատվում է այն միտքը, որ թեև Իսլամական հեղափոխության երկիրը դարձավ գաղափարախոսականացված, բայց այդուհանդերձ, քաղաքական պրագմատիկ մը նույնպես Իրանում չի զիջել իր դիրքերը:

Հատկանշական է, որ իսլամական քաղաքական գործընթացներն Իրանում ամենին չեն բացառում իսլամական արժեհավակարգից ղուրբ գտնվող երկրների ներգրավվածությունը տարածաշրջանային անվտանգության պահպանման գործում: Դրանով են պայմանավորված ԻԻՀ քայլերն ուղղված Թեհրան-Երևան-Մոսկվա առանցքի կարևորմանը, որն ունի տարածաշրջանում ինչպես ուժային հավասարակշռության պահպանման, այնպես էլ հեռահար աշխարհաքաղաքական նպատակներ:

Այնեպես է, որ իսլամական քաղաքական գործընթացներն ունեն վճռորոշ կարևորություն ոչ միայն Իրանի ներքին, այլև տարածաշրջանային խաղաղության և անվտանգության պահպանման հարցում,

¹ Шелев В. Н., Внешняя политика современного Ирана: геополитические интересы на Кавказе и Юге России, Иранский мир и юг России, Южнороссийское обозрение, № 22, Центр системных региональных исследований и прогнозирования ИППК при РГУ и ИСПИ РАН, Ростов-на-Дону, 2004, с. 190.

քանզի ցանկացած լուրջ փոփոխություն Իրանի ներքին և արտաքին քաղաքական կողմնորոշիչներում, որը խորթ է իսլամական արժեհամակարգին, կարող է գրկել երկիրը հասարակությունը համախմբող ուժից և հանգեցնել տարածաշրջանային ուժերի նոր, անկանխատեսելի դասավորության:

Resume

The Islamic Revolution of Iran in the Context of Regional Security

Rudik Yarlyan

In order to understand the value of Islamic Revolution of Iran in the regional safety context first of all it is necessary to discuss the Islamic political factor organizing the Iranian society after analyze the compatibility of the Islamic political ideology with other systems at the level of interstate attitudes. Basically these two major factors explain the value of the Islamic political processes directed on peace and stable development of the region and preservation of the safety system.

It is also necessary to note that expansion and popularity of Islamic political processes would not be possible if there was no religious ideology in its basis being more accessible from the outlook of public understanding. But the popularity of Islamic models are also explained by external factors.

It is simultaneously worth mentioning that Islamic political process within different Muslim countries don't have identical expressiveness: first of all it is connected with national strategic interests of the separate states trying to harmonize the strategic interests with the Islamic religious-political philosophy and mentality.

*Ռուսն Սմբատյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոն*

«ՖԱՋՐ» ՏԱՍՆՈՐՅԱԿԸ ԵՎ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԷՆԴԱՓՈՒՄՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆ ԻՐԱՆՈՒՄ

1978-1979 թթ. Իրանի Իսլամական հեղափոխությունը 20-րդ դարի երկրորդ կեսին ոչ միայն Մերձավոր և Միջին Արևելքում, այլև ամբողջ աշխարհում տեղի ունեցած կարևորագույն հասարակական-քաղաքական փոփոխություններից է: Այդ հեղափոխության կիզակետն է համարվում «Ֆաջր» տասնօրյակը՝ հեղափոխության հաղթանակի օրվան նախորդած վերջին տասը օրը՝ իրանական օրացույցով բահման ամսվա 12-22-ը, որը համընկնում է գրիգորյան օրացույցի փետրվարի 1-10-ը ընկած ժամանակահատվածի հետ:

Բավականին կարճ, բայց նշանակալի իրադարձություններով հարուստ այս տասնօրյակը կոչվում է «Ֆաջր», որ նշանակում է լուսաբաց, արշալույս, լույս, որով նկատի առնվում այն հանգամանքը, որ 1979 թ. փետրվարի 1-ին Այաթոլլահ խոմեյնու Իրան ժամանմամբ սկսվում է հեղափոխական հաղթական լուսաբացը, որը տևում է տասն օր մինչև փետրվարի 10-ը՝ հեղափոխության հաղթանակի օրը¹:

Անհրաժեշտ է նշել, որ մինչ այդ 1978 թ. աշնանը հեղափոխական իրավիճակը փոխակերպվեց հեղափոխության, և իրադարձությունները աստիճանաբար անվերահսկելի դարձան ոչ միայն շահական իշխանության, այլև հենց շարժման մեջ ընդգրկված ուժերի համար²: Բողոքների, ցույցերի, գործադուլների հզոր ալիքը Մոհամադ Ռեզա շահին ի վերջո հարկադրեց 1979 թ. հունվարի 16-ին ընդմիջում արել Իրանը: Նույն օրը Իրանի մեջլիսը հաստատեց Շահալուր Բախտիարի թեկնածությունը նոր վարչապետի պաշտոնում, որով փորձ էր արվում քիչ թե շատ մեղմել հեղափոխական կրքերը³: Սակայն շիական հոգևո-

¹ <http://www.tbzmed.ac.ir/monasebat/meli/fajr/fajr1.htm>.

² Foran, John, Fragile Resistance: Social Transformation in Iran from 1500 to the Revolution (Boulder, Co.: Westview Press, 1993), pp. 556-566.

³ Иранская революция 1978-1979 гг. Причины и уроки, Москва, Наука, 1989, с. 122.

յականությունը, որ ձգտում էր արդեն այս շրջանում ամբողջովին իր ձեռքում կենտրոնացնել հեղափոխական նախաձեռնությունը, ի սկզբանե չէր ընդունում շահի կողմից կշանակված որևէ կառավարություն: Պատահական չէ, որ Բախտիարի կառավարության հաստատումից հետո Այաթոլլայի Խոմենիին հայտարարեց. «Շահի ուժիմն անօրինական է, մեջխե անօրինական է, Բախտիարի կառավարությունն անօրինական է»¹:

Ստեղծված իրավիճակում, երբ շահի հեռանալուց հետո իշխանությունը փաստացի գտնվում էր բանակի ձեռքում, իսկ Բախտիարի կառավարության իշխանության գալը չկարողացավ զսպել հեղափոխական հզոր ալիքը, անխուսափելի դարձավ հեղափոխականների մեծամասնության համար շարժման առաջնորդ համարվող մինչ այդ 15 տարի արտերկրյա արքայուհի գտնվող Բարձրաստիճան հոգևորական Այաթոլլայի Խոմենու վերադարձ Իրան: Երկար բանակցություններից հետո, համոզվելով, որ Խոմենու վերադարձը հայրենիք այլընտրանք չունի, ի վերջո բանակի ղեկավարությունը վճռեց թույլատրել նրան վերադառնալ Իրան: 1979 թ. փետրվարի մեկին Փարիզ-Թեհրան հատուկ շվեյթով Այաթոլլայի Խոմենին վերադարձավ հայրենիք, և հեղափոխությունը մտավ իր հաղթական վերջնափուլ՝ «Ֆաջր» տասնօրյակ²:

Նա ջերմ ընդունելության արժանացավ Մեհրաբադ օդանավակայանում մարդկանց հոծ բազմության կողմից, և հենց այնտեղ իր առաջին խոսքում նշեց, որ շահի հեռացումն Իրանից հաղթանակի միայն առաջին քայլն է, անհրաժեշտ է միասնական պայքարով հասնել վերջնական հաղթանակի³: Ապա, ինչպես նախատեսվել էր կանխավ, Խոմենին մեկնեց Բեհեշթ Ջահրա գերեզմանատուն, և այն հատվածում, որտեղ թաղված էին հեղափոխության մարտիրոսները, բազմահազար մարդկանց ներկայությամբ ելույթ ունեցավ: Իր ելույթում նա կրկին նշեց, որ չի ճանաչում Բախտիարի կառավարությունը, և ինքն անձամբ ժողովրդի օգնությամբ նոր կառավարություն կնշանակի: Բացի այդ, նա բանակի ղեկավարությանը կոչ արեց չեզոք լինել քաղաքական խեղդիներում⁴: Խոմենին շատ լավ հասկանում էր, որ իրադրությունը երկրում մտել է մի փակուղի, որ անբազուցալուծման բանալին գտնվում էր

բանակի ձեռքում: Բանակի ճնշող մեծամասնությունը դեռ հավատարիմ էր զինվորական վերնախավին՝ գեներալ Ղարաբաղիի գլխավորությամբ: Չնայած Խոմենու կոչերին, բանակի մաս կազմող խմբերից միայն համաֆարսերը՝ օդանավակայանների սպասարկող տեխնիկական անձնակազմն էր անցել հեղափոխականների կողմը: Կառավարության և մեջխի պատգամավորների մեծ մասը չէին ընդունում խոմենիականների հնչեցրած հրաժարական տալու կոչերը: Վարչապետ Բախտիարը ցանկություն հայտնեց հանդիպել Խոմենու հետ, սակայն վերջինս համաձայնեց ընդունել նրան միայն հրաժարական տալու պայմանով⁵:

Փետրվարի 3-ին Խոմենին հանդես եկավ նոր ավելի վճռական հայտարարությամբ և կառավարությանը պատահեց «ջինհադի ֆաթվա» արձակել և, գեթ հայթայթելով, մարդկանց սրբազան պատերազմի հրավիրել: Այս անգամ նա բանակայինների կոչ էր անում միանալ ժողովրդին և խոստացավ, որ շուտով նոր կառավարություն կնշանակի: Երկու օր անց Խոմենին սեփական նախաձեռնությամբ Մեհդի Բազարգանին կշանակեց վարչապետ, և նոր կառավարության կարևորագույն առաքելությունը վարչակարգի փոփոխության, նոր սահմանադրության պատրաստման և մեջխի ընտրությունների կազմակերպման ապահովումն էր⁶: Փաստորեն Իրանում սկսեց գործել երկու անկայն կառավարություն:

Խոմենիստները իրենց կողմն էին գրավում նորակոր ժողովրդական զանգվածների և նույնիսկ մեջխի դեպուտատների, սակայն բանակը դեռևս անասան էր և իր ձեռքում էր պահում երկրի կայրուղու գույն ռազմավարական օբյեկտները: Հեղափոխության հաղթանակից 3 օր առաջ (փետրվարի 19) Թեհրանում տեղի ունեցավ հեղափոխության սկզբից ի վեր եղած ամենամարդաշատ հանրահավաքն ու երբը: Հաջորդ օրը Թեհրանի Դուշան-Թեփե ռազմա-օդային ուժերի գործադանում համաֆարսերի ըմբոստացումից հետո շահական զվարդիան գեներալ ուժով փորձեց ճնշել ապստամբներին: Ձորամասի հարակից շրջաններում ապրող մարդիկ, տեղեկանալով այդ բայխումների մասին, շտապեցին օգնել համաֆարսերին: Երկարատև արյունալի բախումներից հետո ի վերջո համաֆարսերը կարողացան ճնշել գվարդիականների պա-

¹ Ibid, 123-124.

² Резников, А. Б., Иран: падение шахского режима, под общ. ред. Р. А. Ульянова. - М.: Политиздат, 1983, с. 80-81.

³ <http://shu.ac.ir/Default.aspx?tabid=1805>.

⁴ Резников А. Б., նշվ. աշխ., էջ 82-85:

⁵ Иранская революция 1978-1979 гг., նշվ. աշխ., էջ 127:

⁶ Abrahamian Ervand, Iran Between Two Revolutions, Princeton University Press, 1982, p. 527-528.

շարման օղակը և մասամբ զինեցին իրենց օգնության հասած հեղափոխականներին: Թեհրանի ամբողջ տարածքով մեկ ծայր առան զինված բախումներ: Մեկը մյուսի հետևից հեղափոխականների ձեռքն ընկան Թեհրանի ոստիկանատները և մարդկանց էլ ավելի մեծ խմբեր սկսեցին զինվել¹:

Հեղափոխության հաղթանակի օրը բանախի 22-ին/փետրվարի 10-ին հեղափոխականները գրավեցին Թեհրանի բոլոր ոստիկանատները, Ղարս և Էվին բանտերը, շահական պալատները, մի քանի զորամասեր և ի վերջո հեռուստատեսության և ռադիոյի շենքերը: Ստեղծված իրավիճակում զինված ուժերի քարձրագույն խորհուրդը հատուկ նիստ հրավիրեց և խորհրդի ղեկավար Աբբաս Ղարաբաղի, և շուրջ 50 զենքավորների մասնակցությամբ: Բարձրաստիճան զինվորականների մեծամասնությունը համաձայնեց չընդդիմանալ հեղափոխական շարժմանը, և խորհուրդը բանակի չեզոքության մասին պաշտոնական հայտարարություն ընդունեց, որն ընթերցվեց հեռուստատեսությամբ և պաշտոնապես հայտարարվեց 2500-ամյա շահական ռեժիմի տապալման և հեղափոխության հաղթանակի մասին²:

Պետք է նշել, որ «Ֆաջր» տասնօրյակի ժամանակահատվածում և հեղափոխության վերջնական հաղթանակի գործում վճռական դեր խաղացին 2 հանգամանք.

1. Խումեյնու վերադարձն Իրան և հեղափոխական շարժման ղեկավարության անմիջական ստանձնումը.
2. Խումեյնուների ապստամբությունը, որի արդյունքում հեղափոխականների ձեռքն ընկավ մեծ քանակությամբ զենք և զինամթերք. և զինված պայքարը բանակային և կառավարական ուժերի դեմ ի վերջո բերեց հեղափոխության հաղթանակին:

¹ Иранская революция 1978-1979 гг., т.2, с.21, с.22, с.23-24.

² Ibid., 134-135; Abrahamsian Ervand, т.2, с.21, с.22, с.23-24.

Resume

Ten Days of "Fajr" and the Victory of Islamic Revolution

Roman Smbatyan

The Islamic Revolution of Iran in 1978-1979 was one of the most significant socio-political transformations in 20th century not only in the Middle Eastern region but in the world. The pivotal period of this movement were the last ten days forthcoming the day of victory, called "Fajr". "Fajr" means dawn in Persian and symbolizes the victorious dawn of revolution which begins with the return of the real spiritual and previously exiled leader Ayatollah Khomeini to Iran in the 1st of February and comes to its end in the 10th of the same month that is the day of victory of revolution.

The two key aspects that were most influential in this period to reach the final victory of the Islamic Revolution were the following:

1. By returning to Iran Ayatollah Khomeini took the leadership of the revolution and organized the movement,
2. The rebellion of hamofars (technical personnel of airports) brought about a situation where the revolutionists could get access to arms and weaponry and due to their armed struggle against military and governmental forces the Islamic Revolution became victorious in Iran.

*Ձախրա Ֆեդերայի
Իրանի «Ազատ» իսլամական համալսարանի դասախոս
(հայրավայրեն մասնագետ)*

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ շԱՄԱՐԱԿԱՆ ԵՄԻՐՈՒՄՆԵՐԻ
ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՔՆՆԱԿՈՒՄԸ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ
ՏԱՍԱՆՅԱԿՆԵՐԻ ԸՆԹԱՑՆՈՒՄ ԵՎ ԻՐԱՆԻ
ԱՋԵՆՑԻՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԱՑ ՎՐԱ

Վերջին իրադարձությունների ծագման պատճառների և տեսակների ներկայացում

«Աղբատություն և գործազրկությունը խաթարել է արաբների հոգեբանությունը»: Այսպիսի հայտարարությամբ հանդես եկավ Արաբ համայնքի գլխավոր քարտուղարը 2011 թվականի նոյեմբերի 29-ին Եգիպտոսի Եարմ էլ Շեյխ քաղաքում անցկացված համահավաքի ժամանակ¹: Այս արտահայտությունն իրականում փաստում է այն իրականությունը, որ 2010 թվականի դեկտեմբերի 17-ին Սաիդ Բուզիդ քաղաքում թուևիսցի երիտասարդ Բու Ազիզին՝ աղբատությունից և հուսալքությունից դղողված, ինքնահրկիզման գնաց: Այս իրադարձությունը հանդիսացավ Թունիսում և արաբական այլ երկրներում հասրակական շարժումների և ապստամբությունների առաջացման պատճառ, ինչի արդյունքում գահընկեց արվեցին երկու բռնակալ և անարդար գահակալներ: Այս փաստը մարդկանց սրտերում հույսի շողեր վառեց: Հետաքրքրական է այն, որ Բու Ազիզին, որը որպես անհատականություն հարգվից և շնորհալի մարդ էր ներդրուստ հետամնացության, այլալվանության և անարգանքի զգացում ուներ և գտավ, որ փրկության միակ ելքը ինքնապաշտության այդ դաժան տարրատեսակն է, ինչի միջոցով նա արտասպանություն իշխանության և հասարակության հանդեպ ունեցած իր հակակրանքն ու նողկանքը: Վերջին շաբաթների ընթացքում արաբական աշխարհի տարբեր ծայրերում, այդ թվում նաև Եգիպտոսում, Հորդանան-

նում, Թունիսում, Լիբիայում, Եմենում և Ալժիրում բարձրացել են ապստամբության ալիքներ: Ժողովուրդը, որ սկզբում դժգոհ էր պարենային մթերքների թանկությունից և ինֆլյացիայից, աստիճանաբար ընդլայնեցին իրենց պահանջներն ու ձգտեցին ազատության հաստատման անարդարության վերացման և ի վերջո պահանջեցին իրենց տարիներ իշխող ղեկավարների հրաժարականը:

Թունիսում, Եգիպտոսում և այլ վայրերում կատարվածը, որը շատ արագ տարածվեց նաև արաբական մյուս երկրներում հասարակական լուրջ ճգնաժամի վկայությունն է: Հիշյալ երկրների իշխանությունները տարիներ շարունակ ճնշել են այդ շարժումներն ու թաքցրել իրականությունը, ձեռքավալել ու հալածել են իշխանության ընդիմացող և Իրանի իսլամական եղափոխության մասին խոսողներին:

Արաբական երկրների վերջին շարժումներն ու նրանց ազդեցությունն Իրանից

1970-ականների վերջերին տեղի ունեցած Իրանի իսլամական եղափոխությունն ու 1980-ականներին Խորհրդային Միության փլուզման աշխարհի տարբեր ծայրերում, և հատկապես իսլամական երկրներում, հասարակական շարժումների առաջացման պատճառ դարձան աշխարհում՝ թողնելով մնայուն ազդեցություն: Բազմաթիվ վերլուծաբանների կայծիցով արաբական աշխարհում տեղի ունեցած վերջին իրադարձությունները կրում են իսլամական եղափոխության ազդեցությունը:

Արաբական աշխարհի վերջին իրադարձությունների մասին պետք է ասել, որ միջինասիական անառակ իշխանությունների և բռնակալ վարչակարգերի դեմ ապստամբելու պատրաստակամությունը պայմանավորված է ժողովրդի ազատության և արդարության ձգտմամբ: Այս երևույթը տարածաշրջանի պատմության մեջ նորություն չէ և ժողովուրդը բազմաթիվ անգամներ առիթ է ունեցել հայտնելու իշխանության հանդեպ իր դժգոհությունը, սակայն նրանց շարժումներն ու ապստամբությունը դաժանաբար ճնշվել է: Ներկայիս ապստամբություններն ու շարժումները վկայում են դեմոկրաֆիական համակարգի լուրջ փոփոխությունների մասին: Բոլոր շարժումները վկայում են այն մասին, որ մարդիկ հոգնել են դաժան և բռնապետական վարչակարգերի հալածանքներից և անարդարությունից: 2011 թվականի փետրվարի 10-ին CNN հեռուստաընկերության թղթակիցներին հարցազրույց տվող մարդ-

¹ <http://ir.mondadiplo.com/rubrique129.html>

կանցից շատերը նշում էին, որ իշխանության վերջին քառասուն տարիներին գնդապետ Կադդաֆին ոչ մի կերպ չի քարելավել երկրի բնակչության կյանքն ու պահանջում էին արդարություն, ազատություն և տնտեսական բարեփոխումներ:

Հասարակագիտության մեջ «հասարակական շարժում» եզրույթով է կոչվում ընդհանուր շահերից բխող և կոնկրետ նպատակներ հետապնդող ցանկացած խմբակային շարժում, որն իրականացվում է ոչ պետական կառույցների և խմբավորումների կողմից: Հասարակական շարժման ծավալները պայմանավորված են շարժման անդամակիցների քանակությամբ: Փոքր հասարակական շարժումներ են համարվում այն շարժումները, որոնց մասնակիցների թիվը հարյուրից պակաս է: Մեծ հասարակական շարժումներին կարող են մասնակցել հազարավոր և միլիոնավոր մարդիկ: Այսօր արաբախալամական երկրներում և կատվող հասարակական շարժումներին մասնակցում են միլիոնավոր մարդիկ, որոնք ցանկանում են իրականացնել հասարակական բարեփոխումներ, վերացնել արքատությունը, ապահովել երկրի ազատությունն ու անկախությունը: Հատկանշական է, որ որոշ շարժումներ իրականացվում են տվյալ հասարակությունների կանոնների սահմաններում, իսկ ոմանք ինքնաբերական և ոչ օրինական են: Իհարկե, արաբական երկրներում, որտեղ իշխանությունների լիիրազությունն ու անպատեհությունը փակում է մարդկանց ազատ արտահայտման և կարծիքներ հայտնելու իրավունքը, ժողովրդական շարժումների առաջացումը կարող է հանգեցնել իշխանափոխության և ապստամբության:

Արաբական երկրների մայրաքաղաքներում տեղի ունեցած առանձնակեր շարունակվող բռնատիրական և կեղեքիչ իշխանությունների սխալ քաղաքականության, անարդարության արդյունք է: Մոցիալական խնդիրներով սկսված բոլոր շարժումները վերածվեցին ազատագրական պայքարի և իշխանափոխության փորձերի: Բոլոր շարժումների հիմնական դրդապատճառը իշխանության և ժողովրդի միմյանցից հեռացնելն է:

Այս շարժումները ցույց են տալիս, որ արաբական երկրներում քաղաքական իսլամն առավել քան երբևէ քաղաքացիական բնույթ է ստացել: Վերջին տասնամյակներում Միջին Ասիայի և Հարավային Աֆրիկայի երկրների իսլամական և ոչ իսլամական խմբավորումներն առավել տեղեկագրված են քաղաքացիական պայքարի խնդիրներից և հենց դրանով էլ պայմանավորված են այս շարժումները: Արաբական աշ-

խարհում սկիզբ առած իրադարձությունները, որոնք ճակատագրական բնույթ են ստացել, անկասկած, հանդիսանում են Բրանի Բալամական հեղափոխության արձագանքներից: Հենց Բալամական հեղափոխության կոչերի ներքո էլ մարդիկ առանց բռնության դուրս են եկել պայքարելու քաղաքական, տնտեսական և մշակութային բարեփոխումների համար:

Հիշյալ երկրներում իշխանության գլխում կանգնած պաշտոնյան միաժամանակ օրենսդիր մարմին էր, որը երկրի բոլոր օրենքները սահմանում էր ի նպատակ իր շահերին: Օրինակ, Բեն Ալիին՝ ավելի քան 25 տարի, Մուբարաքը՝ երեք տասնամյակից ավել և Քադաֆին՝ ավելի քան քառասուն տարի իշխում էին և անգամ մտածում, որ կարող են իրենց իշխանությունը փոխանցել իրենց ժառանգներին: Մեծ կապիտալն ու բոլոր ռեսուրսները պատկանում էին իշխանության գլուխ կանգնած պաշտոնյային, ինչը ժողովրդին դարձնում էր հուսալքված և անապահով: Բոլոր շահերն ուղղված էին դեպի կենտրոնացված իշխանություն: Հենց այս պատճառով էլ վերջին մի քանի շաբաթների իրադարձությունների ուսումնասիրության արդյունքում մենք տեսնում ենք, որ սոցիալական անապահովվածության և տնտեսական խեղդիների արդյունքում սկսված դժգոհությունների ալիքը վերածվում է լուրջ քաղաքական պայքարի և իշխանափոխության:

Երբորդ աշխարհի երկրների վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ արաբական երկրներում իշխանության և ժողովրդի միջև տարածությունը հասել է պայթյունակետից չափերի, երկրում ստեղծվել անկայուն իրավիճակ, որի արդյունքում ուշ թե շուտ դեկավորությունը պետք է փոխվի և ստեղծվի նորիշխանական համակարգ: Տի Դի Դայերն այն համոզմունքին էր, որ սովը երբորդ աշխարհի երկրներում հասարակական անվտանգության և կայունության համար մեծ սպառնալիք է: Այսօր մենք լավագույնս համոզվում ենք նրա խոսքերի հավաստիության մեջ:

Որոշ արաբական երկրներում նախագահները կամ թագավորները դեռևս անմիջական քննադատության չեն ենթարկվել: Իհարկե, աստիճանաբար հակադրություններն ու բողոքի ակցիաները սաստկանում են: Մովը, գործազրկությունը, մարդկային արժանապատվության հանդեպ արհամարհանքը, ապագայի հանդեպ հուսալքությունը և նմանա-

¹ <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-12347016>.

² D. J. Dwyer(ed), The city in the third words Macmillan, 1974 pp 9-15.

տիպ մի քանի գործունեներով են պայմանավորված հիշյալ երկրների սոցիալական շարժումները, որոնք համաշխարհային բնույթ են ստացել:

Այդ ժողովրդական շարժումները արաբական երկրների, ինչպես նաև երրորդ աշխարհի, վրա բազմաբնույթ ազդեցություն են ունեցել, որոնք կունենան բազմաթիվ արդյունքներ: Դրանց ծագման արդյունքում իշխանությունները ստիպված կլինեն որոշակի փոփոխություններ իրականացնել, որոնք հետևյալն են.

1. սոցիալական փոփոխությունները, ինչի արդյունքում նախ և առաջ պետք է ուշադրություն դարձվի կանաչ և երիտասարդների խնդիրներին և վերանա նախկին անտարբերությունն ու արհամարհանքը.

2. կարևոր խնդիր է նաև պետական մարմինների և կառավարության հանդեպ վստահության ձևավորումը.

3. երրորդը քաղաքական մոդելի փոփոխումն է: Այսօր իշխանություններն այլևս չեն կարող ժողովրդի հանդեպ կիրառել իրենց նախկին սահմանափակ քաղաքականությունը և ստիպված են ընդլայնել քաղաքական դաշտն ու ձևավորել հասարակական խմբավորումներ և կուսակցություններ: Մարտի Մսիթի խոսքերով այդ իրադարձությունները կարելի է անվանել տարածված պլուրալիզմ, ինչի արդյունքում արաբական աշխարհում տարածվեցին տարբեր գաղափարներ,

4. չորրորդ հիմնական նպատակը անվտանգության մոդելի փոփոխությունն է: Իհարկե, իսլամական երկրների մայրաքաղաքներում կատարվածի արդյունքում թվում է, որ անվտանգության մոդելի փոփոխումն անխուսափելի է, սակայն այս հոդվածում մենք չենք մանրամասնի այդ խնդիրը: Այսուհանդերձ, BBC-ի վերլուծաբանի կարծիքով (19/02/2011) վերջին իրադարձություններից հետո Միջին Ասիան ընդլայնել և լրջացրել է անվտանգության վերահսկումն ու քաղաքները դարձրել զինվորականացված, սակայն իրականում հիշյալ երկրները 1960-ականներից մինչ այսօր ղեկավարվում են արտակարգ իրադրության կանոններով.

5. ստեղծական փոփոխություններ, որոնք նկատվում են նավթի և ոսկու գների կտրուկ թանկացման ոլորտում,

6. արաբական երկրների ղեկավարների միասնականության փլուզումը հատկապես երանց, ուլթեր տարածաշրջանում արևմուտքի կարևորագույն պաշտպաններից էին: Արևմուտքից ունեցած վերջիններին

կախվածության արդյունքում երկրում տիրում էր բռնապետություն ու սովը:

Իսլամական երկրներում տեղի ունեցած շարժումներն ունեին վեց առանձնահատկություն:

Արաբական երկրներում տիրող ժողովրդի իրավիճակն ու ժողովրդական շարժումները ինչու նաև են միմյանց: Հիշյալ բոլոր շարժումները զուրկ են առաջնորդից և համակարգված գործնակերպից: «Լուսնու»-ի թղթակցի հավաստմամբ ոչ մի քաղաքական ուժ չի կարող իրեն հայտարարել Թունիսի, Եգիպտոսի, Լիբիայի և Եմենի հեղափոխությունների առաջնորդը: Հիշյալ երկրներում քաղաքական ընդդիմությունն ու խմբավորումները տասնամյակներ շարունակ ձեռվել են և սոցիալական շարժումներից շատ հետ են: Մակայն այսօր մարդիկ ինքնաբերական կերպով ոտքի են կանգնել և ցանկանում են իրականացնել բարեփոխումներ և փոփոխել երկրի քաղաքական իշխանությունը:

Իրականում արաբական երկրների համակարգերում իշխանավորների հայացքը ժողովրդի և հասարակության հանդեպ Թունիս Զաբեդի տեսության համաձայն է, որը համոզված էր, որ ժողովուրդը մշտապես քաշքշուկների և որոտումների մեջ է, միայն ուժի և բռնության միջոցով կարելի է հասարակության մեջ կարգ ու կանոն հաստատել: Ասվածի լավագույն սպացույցը Լիբիայում տեղի ունեցածն է: Այս երկրներում ժողովրդին ընդունում են որպես դասապարտվածներ, որոնց պետք է կարգի հրավիրել բռնի ուժով և պահել ձեռնառն տակ: Մակայն այդ երկրներում սկզբնավորված շարժումները ժողովրդավարական առանձնահատկություններ ունեն և բխում են նախ և առաջ ժողովրդական խավերից.

1. Իսլամական աշխարհում քաղաքական իսլամը առավել քան երբևէ քաղաքացիական բնույթ է ստացել:

2. Ակտիվ մասնակցություն են ցուցաբերում երիտասարդները, որոնք բարեփոխումների կողմնակից են:

Իսլամական երկրներից շատերում այսօր բնակչության ավելի քան 70 տոկոսը երիտասարդներն են: Այս հզոր մեծամասնությունը դասակարգային առումով միատեսակ չէ, սակայն աղքատության, գործազրկության, թշվառության և արհամարհվածության դեմ պայքարի գաղափարը երանց միաձուլել է: Ազատագրական պայքարի և իշխանափո-

¹ <http://www.time.com/time/world/article/0,8599,2055496,00.html>.

խության ձգտումները նրանց միաձուլել են և կրանք բոլոր դարձել են մեկ ընտանիքի անդամներ (2011 թվականի փետրվարի 9-ին BBC -ին տված ճշգիտացի վերլուծարևի խսրքերից):

Արաբական ապստամբ երկրներում այսօր երիտասարդները համարվում են առավելություն: Նրանք միասնական պայքարի են ելել դիկտատորների և կեղեքիչ իշխանությունների դեմ և ցանկանում են պահպանել իրենց ձեռքերումները: 2011 թվականի մարտի մեկին CNN հեռուստաընկերությունը հետարձակեց մի հեռուստաֆիլմ, որը վերաբերվում էր Թունիսում և Լիբիայում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ երիտասարդների մասնակցությանը: Տեսաֆիլմում երիտասարդները գիշեր ու ցերեկ ծամախմբված պայքարում և պաշտպանում էին իրենց հեղափոխական ձեռքերումները: Այսպիսով, նրանք առանց նյութական և բարոյական կորուստների ու վնասների ազատվեցին բռնապետական իշխանության ճիրաններից և անհանգստացած են իրենց երկրի անվտանգությանը և առաջընթացով:

3. Հիշյալ բոլոր շարժումները արդարության և ազատության հաստատման համար են:

Իհարկե, պետք է ասել, որ ապստամբության և հասարակական ընդվզումների հիմնական շարժիչ ուժը՝ աղքատությունը, գործարկությունն ու տնտեսական անհավասարությունն էին, որոնց արդյունքում հասարակական տարբեր խավեր հայտնվել էին սարսափելի ճնշումների տակ: Կարևոր գործոն էին նաև քաղաքական ճնշումները:

4. Հիշյալ հասարակական շարժումների ընդգծված առանձնահատկություններից էր նաև քաղաքային տարբեր խմբավորումների ակտիվ մասնակցությունը, որոնք աղքատության գործազրկության, իրենց ապագայի հանդեպ ունեցած անվստահության, անարդարության և անապահովության պատճառով պայքարի էին ելել: Այս շարժումները, նման առանձնահատկությունները, որոնք հատկանշական են հիշյալ բոլոր երկրներին, կարողացել են կարճ ժամանակահատվածում մեծ հաջողություններ գրանցել և սա անհանգստության տեղիք է տալիս:

Հիշյալ շարժումները կարող են կախանալային արագությամբ տարածվել նաև աշխարհի ամենահեռավոր ծայրերը՝ Հեռավոր Արևելքից մինչև Հարավարևելյան Ասիա: BBC հեռուստաընկերության տեսաբանը Հարավարևելյան Ասիայի մասնագետների հետ իր զրույցում նշեց, որ (27/02/2011) Հարավային Կորեայի իշխանությունները Լիբիայում իրենց

ներկայացուցչի վերադարձից վախեցան և կարծում են, որ նա կարող էր իր հետ ապստամբության տարրեր ներմուծել: Ուստի, նրանք որոշեցին մերժել իրենց պատվիրակի վերադարձը:

5. Հիշյալ բոլոր շարժումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին կանայք: Իհարկե արաբական աշխարհում գոյություն ունեցող կանանց հանդեպ որոշակի մտածելակերպն ու սահմանափակումները, կանանց մասնակցությունն ու ներկայությունը քաղաքական և հասարակական ապարեզում նվազել է, սակայն վերջին ժողովրդական շարժումներում կանայք ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին: Որոշ տեսաբաններ և վերլուծաբաններ այդ մասնակցությունը համարեցին արաբական աշխարհում կանանց և աղջիկների հարաբյալան երևույթ:

6. Հիշյալ բոլոր ապստամբությունները խուսափեցին բռնությունից, դաժանություններից և ավերածություններից:

Ամբողջ ընթացքում զգացվել է ավանդույթի և մոդեռնիզացիայի ֆիզիկական տարածությունը: Այն զգացվում է նաև այսօր: Եզիպտոսի վերջին մի քանի օրերի փոփոխությունները, որոնք իրականացվեցին Թունիսի բարեփոխումներից հետո և դրանց ազդեցության տակ, բոլոր տեսաբանների մոտ առաջացրեցին մի այսպիսի հարց, արդյո՞ք ճշմարիտ է, որ իսլամական աշխարհը հայտնվել է պատմական մի նոր ժամանակաշրջանի առաջ: Եզիպտոսը, Թունիսը, հատկապես Լիբիան և բազմաթիվ այլ արաբական երկրներ անցած շաբաթների ընթացքում վերածվել են իշխանության և դրա հակառակորդների ուժերի չափման թատերաբեմի: Լիբիայի իրադարձությունները խիստ ցավալի և անհանգստացնող էին և ՄԱԿ-ը ներկայացրեց Քաղաքացիական սանձահարման հատուկ մեթոդներ:

Արաբական երկրների հասարակությունը ժողովրդավարության են ձգտում

Այս երկրների քաղաքական համակարգի քննարկումն ու արաբական և միջինասիական երկրների վրա ունեցած այլ երկրների ազդեցությունը բոլորովին այլ թեմա է և հիմա հնարավոր չէ այն ճշգրիտ ներկայացնել: Սակայն, անկասկած, ժողովրդի լայնամասշտաբ մասնակցությունն ավելանում է փայլուն բարեփոխումներ, որոնք կնվազեցնեն գոյություն ունեցող խնդիրները: Թունիսի իշխանությունները խոստացել են մեկ ամսից ավելի պակաս ժամանակահատվածում անցկացնել

արդար ընտրություններ: Եմենի նախագահը խոստացել է հրաժարվել իշխանությունից՝ չառաջդրելով իր որդու թեկնածությունը: Լիբիայի առաջնորդը խոստացել է լուծել մարդկանց խնդիրները: Նմանատիպ խոստումներով են հանդես եկել նաև արաբական մյուս երկրների առաջնորդներն ու նախագահները: Սա ցույց է տալիս, որ իշխանություններին անհանգստացրել են ժողովրդական շարժումները և նրանք պատրաստ են վերադառնալ ժողովրդավարական սկզբունքներին և հարգել մարդկանց իրավունքները՝ ղեկավարելով արդար և թափանցիկ:

Նոր իշխանավորներին վախեցնում են մայրաքաղաքների և քաղաքների բնակիչների ցույցերն և ապստամբությունը: Սովորաբար, նմանատիպ ճանապարհով իշխանության եկած ղեկավարներն աշխատում են ամեն ինչ անել ի նպաստ ժողովրդի կամ գոնե որոշ ժամանակ պահպանել ստեղծված բարեփոխված իրավիճակը, ինչպես եղավ Ռուսիայի հայրենի և Բուլղարիայում 1990 - ականների սկզբներին:

Արաբական երկրներում շարժումների առանձնահատկությունները

1. Առանձնահատկություններից մեկը միջինասիական տարածաբլան է, որը բավականին խճճված և բազմաբնույթ է, հարուստ բազմաթիվ բարենպաստ և անբարենպաստ գործոններով: Այստեղ առկա է միաժամանակ և տարածաշրջանային, և միջազգային գործոնների ազդեցությունը:
2. Քաղաքական իսլամը իսլամական աշխարհում առավել քան երբևէ քաղաքացիական բնույթ է ստացել:
3. Բազմաթիվ փոփոխությունների պատճառ է դարձել նաև համաշխարհայնացման գործընթացը:
4. Իսլամական խմբավորումների առաջնորդման նմուշաձևը Իրանի հեղափոխությունն է:
5. Հասարակական շարժումներում կրոնագետների մասնակցությունը դարձել է առանցքային, ինչպես օրինակ՝ Թունիսում պարոն Նաուալիին, որը Իսլամական հեղափոխության հետևորդներից է կամ Եգիպտոսի մահմեդականների առաջնորդը:
6. Այսօր իսլամական երկրներից շատերի բնակչության 60-70 տոկոսը երիտասարդներն են, որոնք ներկայացնում են տարբեր

հասարակական խավեր, սակայն նրանց բոլորին միավորել է բռնության և անարդարության դեմ պայքարի այլքը:

Այս օրերը միջինասիական տարածաշրջանի համար ճգնաժամային և ճակատագրական են: Որոշ երկրներում հասարակական և ժողովրդական ապստամբության պատճառը միայն սովն ու անզորություն չէ, այլ բռնությունը, կեղեքումն և անարդարությունը, որոնք անաչելի սահմանների են հասել: Տասնամյակներ շարունակ իշխանավորներն աշխատել են ամեն կերպ սաստել այդ շարժումներն ու պատժել ապստամբներին, սակայն այսօր իրավիճակը բոլորովին այլ է: Այսօր միաբերել կամ մեկ կուսակցությանը ղեկավարվող իշխանությունները բախվել են լուրջ խնդիրների հետ և այլևս չեն կարող պայքարել ժողովրդական պայքարի այլքերի դեմ: Մարդիկ այլևս չեն կարող հանդուրժել ժառանգական նախագահության երևույթը: Վերոհիշյալ երկրներում 1960-ականներից սկսած նմանատիպ դրություն էր և երկիրը գտնվում էր ճգնաժամային իրավիճակում:

1. Բռնապետական քաղաքական վարչակարգերի թուլացումը.

Թունիսում, Եգիպտոսում և մյուս արաբական երկրներում հասարակական շարժումների արդյունքում իշխանավորները, հատկապես Հոսնի Մուբարաքն և Ջեյն օլ Աբեդին Բեն Ալիի խոստացած իրականացնել տնտեսական բարեփոխումներ և արդար ընտրություններ, սակայն Լիբիայում Քադաֆիին գահընկեց անելու փորձերը, ինչպես նաև նրա ընդստությունը անհանգստության լուրջ պատճառ են հանդիսանում:

2. Իշխանավորների ընդդիմության հետ բանակցելու և քաղաքական ազատություն պարզեցնելու պատրաստակամությունը.

Մալաթ Աբդուլա երկրորդն իր անցած սիւլայների սրբազանն եպատակով Հորդանանում իրականացրեց շուտափույթ քաղաքական բարեփոխումներ: Եմենի, Մարոկկոյի, Բահրեյնի և որոշ այլ երկրների ընդդիմությունը իշխանություններին համարում է երկրի առաջընթացի և ճշմարիտ զարգացման խոչընդոտ:

3. Ժողովրդավարության իրականացման ժառանգական և ցմահ իշխանության ավարտի ժամանակաշրջան.

Արաբությունների արդյունքները

Անդրն Թերմենն իր «Յրվածություն և հասարակական կառուցվածք» աշխատության մեջ անդրադարձել է երրորդ աշխարհի քաղաք-

ների ժողովրդական խավերի պայմանների քննարկմանը և նշել, որ ոչ ճշգրիտ տևտեսական, քաղաքական և հասարակական համակարգի արդյունքում երևաք շարունակ հետ են մնացել առաջընթացից ու գարգացումից և բախվել «Anomia» կոչվող երևույթի հետ: Հիմա երրորդ աշխարհի միևնույն մարդիկ, որոնք զգում են, որ կորցնելու ոչինչ չունեն, համախմբվել և ցանկանում են վրեժխնդիր լինել այն իշխանություններին հետ, որոնք խոչընդոտել են իրենց զարգացմանն ու բարգավաճմանը:

Նրանց բոլորի առաջնային ցանկությունն ու ձգտումը արդարությունն ու քաղաքական գաղտությունն է: Հիշյալ նպատակի շուրջ են համախմբվել տարբեր կրոնական, քաղաքական և հասարակական խմբավորումներ, որոնք միասնական պայքարի են եղել և պայքարում են իրենց նպատակներին հասնելու համար:

Երկրորդ կարևոր փաստն այն է, որ ապստամբության և պայքարի գործընթացին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև կանայք և ոչ որ չի չանկազարում նրանց:

Այս մի քանի շարթթվա ընթացքում արաբական բոլոր երկրներում տեղի ունեցող ժողովրդական շարժումներում նկատվում է ազդեցիկ երեք գործուն.

1. Հասարակական անբարենպաստ իրավիճակը, որը իշխանավորների անպատասխանատվության և իրենց իշխանական շրջանակներից դուրս գտնվող անհատների մերժման արդյունք է:
2. Ֆինանսական համընդհանուր անտաակ իրավիճակը, որը Մարկ Ֆիլիպս ու Պոլ Հելվոտը համարում են հասարակական ընդվզումների և հակաիշխանական շարժումների ձևավորման դրդապատճառ¹:
3. Մարդկանց հոգևոր և կրոնական արժեքների հանդեպ անարգանքը: Հիշյալ երկրների մահմեդականները տասնամյակներ շարունակ զգում են, որ արժանացել են իշխանությունների արհամարհանքին և ծաղրանքին: Տասնամյակներ շարունակ

¹ Արաբական երկրների ապստամբների հիմնական կոչերը հետևյալն էին. «Մասնակցություն չենք ցանկանում, բռնապետություն չենք ցանկանում, և մենք ցանկանում ենք ազատություն և արդարություն»:

² Մկրում ապստամբների հիմնական պատճառաբանությունները մթերքների բանկացումն ու ինֆլացիան էր, սակայն աստիճանաբար, ապստամբներն ընդլայնեցին իրենց ցանկությունները:

իշխանավորները անարգել են նրանց կրոնական համոզմունքներն ու դավաճանել իրենց պետական պարտավորություններին¹: Այսօր նրանք աշխատում են վերականգնել իրենց իսլամական ավանդույթն ու սկզբունքները, որոնցից ամենակարևորները արդարությունն ու բոլոր բնակիչների բուռնեցիկ և հավասար կյանքն է:

Արևմուտքի քաղաքականությունը վերջին իրադարձությունների հանդեպ

Արաբական երկրներում տեղի ունեցած շարժումներից առաջ արևմուտքի քաղաքականությունը ընդհանուր առմամբ միտված էր դեպի հիշյալ տարածաշրջանների առջնորդների աջակցում և առտարում: Արևմուտքը նրանց հետ կնքում էր լուրջ ռազմական և տնտեսական պայմանագրեր և CNN-ի մեկնաբանի հավաստամամբ այդ պայմանագրերը երբեմն զերազանցում էին 10 միլիարդ դոլարը: Արաբական երկրներում բռնակալ և կեղեքիչ իշխանությունների և առջնորդների հանդեպ պայքարի ալիքի հետ մեկտեղ հիշյալ երկրներում մեծացավ նաև ԱՄՆ-ի և արևմուտքի վարած քաղաքականությունների հանդեպ դժգոհության ալիքը: Բարեփոխումների իրականացման ժողովրդական պայքարի ալիքը շարունակվում է ամբողջ տարածաշրջանում: Արաբական երկրների ղեկավարները արևմտյան տերությունների աջակցությամբ ամբողջ աշխարհում մահմեդականներին ներկայացրել են որպես անաբեկիչներ և վտանգավոր մարդիկ, իսկ արևմտյան ՁԱԼ-ը որպես մոդեռնիզմի և առաջընթացի պահպաններ են ներկայացնում Քադաֆիին, Մորաբարիին կամ շահ Նուեյեբին: Արևմտյան մամուլը մշտապես ջանում է ներկայացնել իսլամի և մահմեդականների ոչ ճշգրիտ նկարագրիքը:

Բերնարդ Լյուիսը «Թայմ» շաբաթաթերթիին տված իր հարցազրույցում ասել է հետևյալը. «Ցանկանում եմ երկու բան նշել: Առաջինը իսլամի կարևորությունն է ներկայիս աշխարհում, քանի որ այն այսօր ունի ավելի քան մեկ միլիարդ երեք հարյուր միլիոն հետևորդ: Մակայն իսլա-

¹ Ժողովրդի հանդեպ գործած դավաճանության օրինակներից է ընտրությունների կեղծումն ու ժառանգական իշխանության հաստատումը՝ իշխանությունը հանձնելով իրենց որդիներին: Այս առումով աթ փետրվարի 2-ին Մալեկն սասց՝ ապստամբության ձեռնարկումներից մեկն այն է, որ Նախագահը հայտարարել է, որ 2013 թվականից իշխանությունը հանձնում է իր որդուն:

մի կարևորությունը չի պայմանավորվում միայն նրա հետևորդների թվաքանակով և այսօր աշխարհում ունեցած նրա դերակատարությամբ: Այսօր ամբողջ աշխարհում՝ Եվրոպայում, Աֆրիկայում, Իսրայելում և Ամերիկայում ամենուր օրեցօր ավելի է մեծանում հետաքրքրությունն իսլամի հանդեպ: Կարևորվում է նաև իսլամական ինքնությունը և իմ կարծիքով իսլամի ճանաչումը մեզ համար խիստ կարևոր է:

Մարդկանց ջանքերը ներկայիս պայմաններում

Արաբական երկրներում, որոնք կանգնած են խառնաշփոթ իրավիճակի առջև, մինչ հիմա գործող վարչակարգերի խտությունը պայմանավորված էր քաղաքացիական հասարակության թերացումների հետ, իսկ քաղաքացիական հասարակության թերացումները իշխանությունների ժողովրդի և քաղաքացիների հանդեպ գործած դավաճանություն արդյունք են: Հիշյալ բոլոր երկրներում զարգացման մոդելը եղել է խիստ դանդաղ և անարդար, ինչը պետական կառույցների կողմից վարած ոչ ճշգրիտ քաղաքականության արդյունք է:

Resume

Islamic World Social Movements Sociological Discussion During Past Two Decades and Iran's Influence on Them

Dr. Zahra Fehresti, Iran, Azad University, South Branch

The people of Arabic countries, despite having abundant wealth and mineral resources have been suffering from poverty and injustice during the past three decades. Even their voice of protests have been callously suppressed. Recent movements and unrest in the streets of Arabic countries signifies their political and Islamic conscientiousness as well as dismay and anger against their rulers. In the new unrest in Arabic countries, street are no longer the venue for traffic or passage but a new means to unite people and to pass their message concerning their problems and dissatisfaction to the authorities as well as the people of the world. They demand the justice, equality and employment for themselves and responsibility and accountability from authorities. The social movements in Arabic countries is in fact the echo of the Iranian nation revolution, now heard in North Africa,¹ and signifies that a new political setup is needed in those area to guarantee the welfare and prosperity of the people. Today, the people of Arabic countries are tired of the permanent violence, injustice and widespread poverty show their widespread discontent and pursue some economic, social and political change.

In this article, the reasons of the social movements and the reasons of unrests in Islamic countries are briefly elaborated.

*Հահե Առաքելյան
ԵՊՀ Իրանագիտության ամբիոն*

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԱԶԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՆՈՐՀՐԻՄ ՏԵՂՆ ՈՒ ԳԵՐԸ ԻՆՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1978-1979 թթ. Իրանի իսլամական հեղափոխության հիմքում ընկած էին սոցիալ-տնտեսական, քաղաքական և մի շարք այլ դրոպապատճառներ, որոնք մեկը մյուսի հետ փոխկապակցված էին:

1950-ական թթ. վերջերին և 60-ական թթ. սկզբներին հակաշահական ելույթների ավանդույթը որդեգրած ուսանողության մի մասն ակտիվորեն պայքարի նոր ուղիներ էր փնտրում: Ուստիս որպես հեղափոխության սկիզբ և առաջին փուլ կարելի է համարել ուսանողական շարժումները: Հետագայում այդ շարժումների ծավալման զագաթնակետը իրանցի ուսանողների կողմից Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանատան զրավումն էր¹:

1977 թ. սեպտեմբերին ծայր առած իրադարձությունները², որանց ընթացքում փակվեցին մեծ թվով բարձրագույն ուսումնական հաստատություններ և տեղի ունեցան ուսանողական զանգվածային ցույցեր, կարելի է հակակառավարական ակտիվ ելույթների հաջորդ և կարևորագույն փուլի սկիզբ համարել:

Արդեն խոր արմատներ ցցած ժողովրդական հզոր շարժման ճնշման տակ 1979 թ. հունվարի 10-ին Մոհամադ Ռեզա շահը ստիպված էղավ հեռանալ երկրից, իսկ 1979 թ. փետրվարի 1-ին այսթյուլան Նոմեյնի երկարատև վտարանդիությունից վերադարձավ հայրենիք, որին Իրանցի ժողովրդի ամենալայն զանգվածները ցնծությամբ դիմավորեցին:

Փետրվարին ծայր առած զինված ապստամբությունը հաղթանակեց, և սկզբնավորվեց հեղափոխության զարգացման որակապես նոր փուլը:

¹ شمس / معصومه نیکانر - تهران: اطلاعات - 1379. ص 11

² Ислам в современной политике стран востока (конец 70-х-начало 80-х годов XX в.), Главная редакция восточной литературы, М., 1986, стр. 131.

Մարտի 30-ին սկսվեց Իրանի պետական համակարգի որոշման նպատակով հանրաքվեի անցկացումը: Ժողովրդի ճշտող մեծամասնությունը քվեարկեց երկրում իսլամական հանրապետություն հաստատելու օգտին:

Մշակութային հեղափոխությունը իսլամական հեղափոխության, կարելի է ասել, ամփոփումն էր, որի ընթացքում արդեն գործի դրվեցին հեղափոխության ձեռքբերումները և հստակ ներկայացվեցին արդեն Իրանի Իսլամական Հանրապետության օրենքներն ու կրոնական սահմանափակումները:

Իսկ ահա հեղափոխությանը հաջորդող տարիներին երկրում աստիճանաբար սկսեցին ձևավորվել իսլամական հանրապետությունը լրացնող քաղաքական կառույցներ, որոնք իրենց կառուցվածքով և դերակատարությամբ յուրահատուկ էին Իրանի համար:

Իսլամական հանրապետության հղչականն առաջին տարիներին երկրի օրենսդիր մարմնի գործունեությունում առաջացել էին լուրջ խնդիրներ, քանի որ սահմանադրությամբ օժտված նորմերը միշտ չէ, որ համընկնում էին իսլամական շարիաթի օրենքներին: «Իսլամական մեջլիսը»՝ խորհրդարանը, օրենքներ էր ընդունում, իսկ «Պահապան խորհուրդը», որը, ելնելով օրենքով սահմանված իր պարտականություններից¹, պետք է վերահաստատեր պատգամավորների ընդունած օրենք-նախագծերը, երբեմն դրանք համարում էր սահմանադրությանը և իսլամական շարիաթի օրենքներին հակասող: «Պահապան խորհուրդը» խորհրդարանի ընդունած այդ օրենքները հետ էր ուղարկում՝ ներկայացնելով պատգամավորների վերանայմանը և քննարկմանը: Իսկ խորհրդարանը, ելնելով նաև իր գործառույթներից և պնդելով իր որոշումը՝ երբեմն այդ օրենքներն առանց որևէ փոփոխության ենթարկելու կրկին ուղարկում էր «Պահապան խորհուրդ»²: Այսպիսի իրավիճակում բնականաբար առաջանում էին լուրջ հակասություններ և տարաձայնություններ օրենքների գնահատման և հաստատման գործում. մի կողմից ձևավորման անհրաժեշտություն էր հաստատեցել, որն ի վիճակի կլիներ վերջ տալու անորոշությանը:

Չնայած իսլամական հանրապետության իշխանական համակարգում հոգևոր առաջնորդի առկայությանը՝ 1980 թ-ին ձևավորված սահմանադրությունում չկար մի առանձին մարմին, որը կկարողանար վերացնել վերնուշյալ երկու կառույցների գործունեության հետևանքով առաջացած հակասությունները: Եվ այդ կարգավորելու նպատակով հոգևոր առաջնորդը հաճախ միջամտում էր իշխանական որևէ համակարգի աշխատանքներին, ինչը հակասում էր իսլամական հանրապետության՝ Իսլամ Նուռեյնի արտահայտած մտացունեներին. այն է՝ հոգևոր առաջնորդը հեռավորինս ուղղակիորեն պետք է չմիջամտի իշխանական որևէ համակարգի գործունեությանը և պետք է հավասարակշռող դերակատարություն ունենա երկրում առկա խնդիրների լուծման գործում:

Դեռևս հեղափոխությանը հաջորդած սկզբնական շրջանում ոչ մեկի մտքով չէր անցնում, որ ժամանակի ընթացքում նույնիսկ ինքը՝ այսթոլլահ Նուռեյնի տարաձայնություններ կունենա «Պահապան խորհրդի»՝ իր իսկ նշանակված կրոնագետների հետ:

Նուռեյնին որոշ լիազորություններ էր վերապահել մեջլիսին՝ հեռավորություն տալով շրջանցել «Պահապան խորհրդի» վերահսկողությունը:

Իսլամ հայտնել էր, որ մեջլիսին վերապահված հարցերի հստակեցումը վավերական է մեկ այլ կառույցի՝ «Բանխմացների խորհրդի» հավաստումից հետո, և «Պահապան խորհուրդը» իրավասու չէ տեսակետներ հայտնել: Դրանով «Պահապան խորհուրդը» փաստորեն զրկվում էր բազմաթիվ խնդիրների լուծման հարցում իր դերակատարությունից:

Բնականաբար, Պահապան խորհուրդը մեջլիսին վերապահված նաև լիազորությունների համար իր ղեկավարությունն ուներ:

Շեղափոխության առաջնորդին հղած նամակում «Պահապան խորհուրդը» խստորեն քննադատեց մեջլիսին վերապահված իսլամի լիազորությունների համար՝ ղեկավարություն հայտնելով, թե անհնար կլիսի պայքարել մեջլիսում առկա ազդեցիկ ուժերի կողմից պարտադրվող որոշումների դեմ, այն դեպքում, երբ «Պահապան խորհուրդը» մի շարք խնդիրների լուծման վերաբերյալ կարծիք հայտնելու իրավասություն կունենա:

¹ قانون اساسی جمهوری اسلامی ایران، قانون اساسی مصوب 1358، اصلاحات و تغیرات و تنظیم قانون اساسی مصوب

1368/1 تالیف جهنگر منصور - تهران: نشر دوران، 1386، صفحه 68

² آشنایی با سازمان کاز و مدیریت دولت جمهوری اسلامی ایران/نگار بهالدین بروهنی- تهران: موسسه عالی آموزش و پژوهش مدیریت و برنامهریزی، 1386، صفحه 31

Ի վերջո 1988 թ. ձմռանը Իվան Խոմենիի հաստատմամբ հիմնադրվեց «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը»:

Խորհրդի ղեկավարությունը երա հիմնադրման օրվանից մինչ օրս ստանձնել է ԻԻՀ չորրորդ նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆաանա-ջանիին²:

Ստեղծելով «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը»՝ այսօրվա խոմենիի ստիճանաբար երան հանձնեց որոշումների ընդունման գործընթացը կարգավորելու ուղղությամբ իր լիազորությունների մի մասը³: Դրանով իսկ եա այդ կառույցը դարձրեց քաղաքականության մշակման վերջին ատյանը:

Այսպիսով, «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը» կազմավորվում է երկրի հոգևոր առաջնորդի հրամանագրով՝ կարգավորելու խնդիրների լուծումն այն դեպքերում, երբ «Պահապան խորհուրդը» գտնում է, որ մեղիքի որոշումը չի համապատասխանում շարիաթի երոմերին կամ սահմանադրությանը, իսկ մեղիքը, կենտրոլ պետական նպատակահարմարությունից, համաձայն չէ «Պահապան խորհրդի» որոշման հետ⁴:

Այլ կերպ ասած, «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը» հոգևոր առաջնորդի ինստիտուտին կից գործող խորհրդակցական մարմին է, որն աշխատում է կրոնապետի վերահսկողության ներքո և զբաղվում երա կողմից ներկայացված խնդիրների քննարկմանը, որոնք իրագործելի են միայն հոգևոր առաջնորդի կողմից հաստատման արժանանալու դեպքում:

«Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը» ԻԻՀ համակարգի նշանակովի կառույցներից է, որի անդամները՝ համաձայն սահմանադրության, նշանակվում են հոգևոր առաջնորդի կողմից⁵:

Խորհրդի հիմնադրման և այդ կառույցին վերապահված իրավասություններից հետո Իրանում իրավագետների կողմից հաճախ էր քննարկվում, թե արդյոք «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը» օրենսդիր մարմին է համարվում: Հենվելով ներքո-շարադրյալ փաստարկների վրա՝ կարելի է այս հարցին տալ բացասական պատասխան.

Առաջին հերթին, օրենքի տեսակետից սահմանադրության ոչ մի կետում նշված չէ «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի» նման իրավասության մասին: Ուստի, եթե այդ կառույցը նման քայլ կատարելու փորձ անի, ապա ուղղակի կհակասի օրենքին:

Երկրորդ, «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի» լիազորություններն միայն այն ժամանակ են գործի դրվում, երբ մեջլիսն ի վիճակի չէ ընդունված կարգով լուծել իր առջև դրված խնդիրները:

«Իսլամական մեջլիսի» և «Պահապան խորհրդի» միջև հակասությունները սկզբնական շրջանում հիմնականում ծավալվում էին հետևյալ երկու ուղղությունների շուրջ՝ աշխատանքային օրենք և հողատարածքների սեփականաշնորհման օրենք:

Որպես ԻԻՀ գերագույն առաջնորդի խորհրդատու կառույց՝ «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը» իրականացնում է համակարգի քաղաքական գործընթացների նկատմամբ վերահսկողություն, կատարում է երկրի ընդհանուր քաղաքական իրավիճակի կարգավորման, տարածայնությունների լուծման և առհասարակ հոգևոր առաջնորդի կողմից հանձնարարված իր պարտականությունները⁶:

Վերջին տարիներին «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի» կողմից քննարկվել և լուծում են ստացել հետևյալ խնդիրները.

Ըներդետիկայի բնագավառում համակարգի ընդհանուր քաղաքականությունը⁷, քննական պաշարների օգտագործման հարցում համակարգի ընդհանուր քաղաքականությունը⁸, սահմանադրության 44-րդ

¹ تاریخچه 64 ea7c8575-6f08-48f8-a89a-83899dacc64
² اشکالی با رئیس مجمع تشخیص مصلحت نظام - دوران سازندگی
³ http://maslehat.ir/Contents.aspx?m=37e9132c-6609-4b0e-9d94-84347ca2d34c
⁴ قانون اساسی جمهوری اسلامی ایران: قانون اساسی مصوب 1358 اصلاحات و تغییرات و تمیز قانون اساسی مصوب 1368 / تون جهادگیر منصور - تهران: نشر دوران, 1386. صفحہ 76

⁵ Խույն տեղում, էջ 78:

⁶ اشکالی با سازمان کار و مدیریت دولت جمهوری اسلامی ایران/ نکدر بهائین برهانی - تهران: موسسه عالی آموزش و پژوهش مدیریت و برنامه ریزی, 1386. صفحہ 32

⁷ وظیف مجمع تشخیص مصلحت نظام-473f-9af3-e2b2f22f-9a3
b5cb23eb5128

⁸ سیاستهای کلی مصوب مجمع که توسط مقام معظم رهبری ابلاق شده است - معارف حقوقی و امور کسبیرولیا - اسفندماه 1384 - صفحہ 13

⁹ Խույն տեղում, էջ 14:

հողվածի՝ կիրարկման վերաբերյալ համակարգի ընդհանուր քաղաքականությունը, դատական անվտանգության հարցերում համակարգի ընդհանուր քաղաքականությունը, համակարգի ընդհանուր քաղաքականության իրագործման նկատմամբ վերահսկողության սահմանումը և այլն:

Այսպիսով, այս ինքնատիպ քաղաքական կառույցի հիմնադրումով վերջնականապես վերացան խորհրդարանի և «Պահապան խորհրդի» միջև նախկինում եղած տարաձայնությունները, և փոխհամաձայնեցված աշխատանքի համար անհամեմատ նպաստավոր պայմաններ ձևավորվեցին:

«Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդն» այսօր էլ մեծ դերակատարություն ունի երկրի կարևորագույն խնդիրների լուծման հարցում: Խորհրդի կողմից քննարկման արժանացած խնդիրների պարզ թվարկումն անգամ ցույց է տալիս նրա կատարած աշխատանքների վիթխարի ծավալը և երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում դրա անմխտելի դերակատարությունը:

RESUME

The Role of the "Expediency Discernment Council of the System" Within the Government Structure of Islamic Republic of Iran

Vahe Arakelyan

First the author presents the motives and stages of the Islamic Revolution of Iran.

Then he describes the formation of new political institutes in Iran after revolution.

Serious problems arose around the activities of the legislative institute, as constitution's norms not always correspond with Islamic Shariati laws during the first years of Islamic Republic proclamation.

"Islamic Mejlis"- the parliament adopted laws and the Council of Guardians re-approved law-projects according to its responsibilities. Sometimes those projects were considered contradicted to Islamic Shariati law and Constitution, and the Council of Guardians returned them to present for further discussion and revision by parliamentary deputies.

However, based on its functions and insistence of its decision, the Parliament sometimes returned those laws to the Council of Guardians without any changes.

In such cases, during laws' evaluation and approval process serious contradictions and discord arose. So, the necessity of a new structure's establishment appeared which could quit the improbability.

Eventually, "Expediency Discernment Council of the System" was founded by Imam Khomeini's affirmation in 1988, the main goal of which is to solve the above-mentioned problems.

The article refers to the role and activities carried out by this structure.

1. Մجمع تشخیص مصلحت نظام - مرکز تحقیقات استراتژیک - سیاستها و قوانین مرتبط با اصل 44 قانون اساسی - معارف پژوهشهای اقتصادی - تیرماه 1385 - صفحه 3
2. سیاستهای کلی مصوب مجمع که توسط مقام معظم رهبری ابلاغ شده است - معارف حقوقی و امور کسبوسبورتها - اسفندماه 1384 - صفحه 19

*Հայկ Նազարյան
ԵՊՀ միջազգային
համագործակցության վարչություն*

**ԻՐԱՆԻ ՀԱՄԱՐԱԿԱՎԱՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՑԱՆՔԻ
ԼՈՒՍԱՔԱՆՈՒՄԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՆԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

1978-1979 թթ. միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում Իրանում տեղի ունեցող իրադարձություններն էին: Բալանական հեղափոխությունը Իրանում 20-րդ դարի վերջին քառորդի խոշորագույն իրադարձություններից մեկն էր և այդ տարիներին արևմտյան մամուլում լուսաբանվող արդիական թեմաներից: Կան տարբեր կարծիքներ հեղափոխության ընթացքի, ձեռքբերումների, պատմական նշանակության վերաբերյալ: Շատերը այն բնորոշում են որպես էտադիական քայլ երկրի սոցիալ-տնտեսական կյանքում, իսկ մյուսները գտնում են, որ հեղափոխության արդյունքում իրանցի ժողովուրդը թոթափեց տարի կողմից շահագործվելու լուծը և բռնեց ինքնուրույն գարգացման ուղին:

1978-79 թթ. իրադարձությունները իրենց ուրույն արտացոլումը գտան արևմտյան մամուլում: Հիշարժան է ֆրանսիական «Մոնդ դիպլոմատիկ» թերթում լույս տեսած Իրանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ տողերը. «Իրանական ժողովրդի ապստամբությունը դուրս է գալիս բռնապետության դեմ սովորական ապստամբության շրջանակներից: Դա մի ամբողջ ազգի բողոքի արտահայտություն է սոցիալական և տնտեսական գարգացման այն մոդելին, որը նրա վզին է փաթաթվել դրսից: Իրանցիները մերժում են արևմտյան կապիտալիզմը»¹:

1978 թ. հունվարի 7-ին իրանական «Էթեհաթ» պաշտոնաթերթը ապագրեց մի հոդված՝ «Իրան. կարմիր-սև իմպերիալիզմ» վերնագրով, որտեղ այաթոլայան խումեյնիին մեղադրում էին շահի դեմ հեղափոխու-

թյուն կազմակերպելու մեջ: Հենց այս հոդվածը հանդիսացավ այն կայքը, որից բռնկվեց հեղափոխության հրդեհը: Հունվարի 9-ին Ղում քաղաքում տեղի ունեցավ հանրահավաք: Շահական զորքերը դաժանորեն պատժեցին հանրահավաքի մասնակիցներին. 60 հոգի սպանվեց, հարյուրավոր մարդիկ վիրավորվեցին: Ղումում տեղի ունեցած դեպքերը հանդիսացան Իրանի ազգային հեղափոխության սկիզբ: Ցույցեր սկսվեցին Իրանի տարբեր քաղաքներում²:

Դեռ 19-րդ դարում Իրանը գտնվում էր մեծ տերությունների մրցակցության կենտրոնում: Իրանը բավականին հարմար էր և՛ որպես ապստանական շուկա, և՛ որպես հումքի աղբյուր: Ուստի, պատահական չէ, որ Իրանում հաստատվելու համար միաժամանակ ակտիվացան Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը: Լրանց վարած քաղաքականության արդյունքում Իրանը վերածվեց կիսագաղութի: 20-րդ դարի առաջին տասնամյակներում Իրանում հեղափոխական տրամադրություններն էր սիրապետում: Դա պայմանավորված էր Իրանում տար ազդեցության ուժեղացմամբ: 1951-1953 թթ.՝ ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակահատվածը, հետպատերազմյան տարիներին Իրանում ծավալված ազգային-ազատագրական շարժման կարևոր փուլերից էր:

70-ականների կեսերին պետական համակարգի վերին շրջաններում առաջացավ քաղաքական բնագավառում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտություն: Հռնգորականները՝ այաթոլայան խումեյնու գլխավորությամբ, գտնում էին, որ երկրի առաջադիմության և բարգավաճման համար անհրաժեշտ է ստեղծել իսլամական կառավարություն: Վերջիններս լայն քարոզչություն էին ծավալում, որը մեծ արձագանք էր գտնում բնակչության լայն շերտերի մոտ: Գտնվեցին մի շարք մտավորականներ, որոնք գաղափարապես նախապատրաստեցին իսլամական հեղափոխությունը: Դրանցից էին Ջալալ ալե Ամինադը, Ալի Շարիֆիին, Մեհդի Բազադգանը: Ուշադրության է արժանի Ջալալ ալե Ամինադի «Ղարբադեգի» (արևմտամուղություն) գիրքը³: Այս գրքում հեղինակը վերլուծում է Իրանի տնտեսական, քաղաքական իրավիճակը և արևմտամետությունը որակում որպես հիվանդություն, որը վարակել է ամբողջ երկիրը: Արևմտյան տեխնոլոգիաները համարելով սատանայա-

¹ Agaca S., *Iran в прошлом и настоящем*, М., 1981, с. 193-194.

² Եգանյան Ե., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր II, Երևան, 1982, էջ 66:

³ جلال‌الاحمد عزیزمندی، چاپ چهارم، تهران 1341

¹ Բաղրություն Վ., Իրանի պատմություն, Երևան, 2006, էջ 706:

կան՝ նա կոչ է անում ժողովրդին հրաժարվել այն ամենից, ինչ գալիս է Արևմուտքից: Փաստորեն, Ջալալ Կալե Անմադի այս մտաբեկումը կարելի է համարել հետադիմական: Այնուամենայնիվ, Իրանի համար այդ չափազանց բարդ ժամանակաշրջանում նշված գաղափարախոսության դերը կենսականորեն կարևոր էր. ժողովրդին պարզապես անհրաժեշտ էր ազատվել Արևմուտքի ազդեցությունից, որը համարվում էր բացասական երևույթ Իրանի և իրանցիների համար:

Շահը գիտակցում էր, որ իր զվեհի կալված է լուրջ վտանգ: Նա իշխանությունը փոխանցեց ինը հոգուց բաղկացած խմբին և համաձայնեց ժամանակավորապես հեռանալ երկրից: Հետաքրքիր է այն, որ երբ ամերիկյան «Թայմս» ամսագրին տված հարցազրույցի ժամանակ շահին հարցրին, թե ո՞րն է եղել նրա ամենամեծ սխալը, նա պատասխանեց. «Այն, որ ես ընդհանրապես աշխարհ եմ եկել»: Մա վկայություն էր այն բանի, որ շահը վերջնականապես զրկվել էր իրավիճակը փրկելու հույսից:

1979թ. փետրվարի մեկին վտարանդիությունից Թեհրան վերադարձավ այսթուլլահ Խոմեյնին: Նա ուներ բարձր հեղինակություն հասարակության լայն շրջանակներում, ինչի կապակցությամբ արևմտյան մամուլում անվանվեց «Ղոմի պատրիարք»¹: 79-ամյա Խոմեյնին իր ճառում մասնավորապես նշեց, որ Փահլավիների կառավարումը ի սկզբանե անօրինական էր, և որ շահն ամեն ինչ արել է, որպեսզի Իրանը զգա ԱՄՆ-ի և Բարայելի կարիքը²: Կտրուկ քննադատելով արևմտյան քաղաքակրթությունը՝ Խոմեյնին մերժեց համաշխարհային կապիտալիզմը և սոցիալիզմը՝ անվանելով ԱՄՆ-ը «սև սատանա», իսկ խՍՀՄ-ը՝ «կարմիր սատանա»³:

Խոմեյնիի հայտնվելը պատմության բնահարթակում խոշոր երևույթ էր, որը ցնցեց աշխարհը: Խոմեյնին մեծ հեղինակություն ձեռք բերեց շուրհիվ իր քաղաքական խիզախության, երբ նա բացահայտ կերպով հակադրվեց շահին և երա վարած քաղաքականությանը, որն

իր նախադեպը չունեցող երևույթ էր ամբողջատիրական վարչակարգի պայմաններում⁴:

1979թ. ապրիլին Իրանում անկացվեց հանրաքվե, որից հետո Իրանը հայտարարվեց Իսլամական Հանրապետություն: Հանրաքվեի արդյունքներով մասնակցություն էր ցուցաբերել քաղաքացիների 92,5%-ը, որոնցից ընդամենը 1%-ն էր դեմ քվեարկել իսլամական հանրապետությանը: Արևմտյան մամուլը Իրանի ներքաղաքական իրադարձությունների տվեց իր ուրույն գնահատականը: Ֆրանսիական «Ֆիգարո»-ն այն անվանեց «հանրաքվեի ծաղր»: Ամերիկյան մամուլը Իրանը որակեց որպես «աշխարհաքաղաքական սադրանքների սենյակ»: «Այսպիսին էր իրանական հեղափոխությունը, իրանցիները ցանկանում էին այն և ստացան», - գրում է «Վաշինգթոն փոսթ»-ը⁵:

Երկրում 2500-ամյա միապետությունը վերացավ, և Իրանի պատմության մեջ առաջին անգամ հաստատվեց հանրապետական վարչակարգ: 1980թ. հունվարի 25-ին տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Նախագահ ընտրվեց քառասունյոթամյա Աբդուհասան Բահի-սադրը՝ Խոմեյնիի «հոգևոր որդին», ինչպես նրան անվանում էին արևմտյան մամուլում⁶:

Հեղափոխության տարիներին առավել շատ լուսաբանվող թեմաները մամուլում Իրան – ԱՄՆ – ՆԱՏՄ հարաբերությունների մասին էին: Հայտնի է, որ Իրանում արդիական էր ինչպես հակամերիկյան, այնպես էլ՝ հակախորհրդային տրամադրությունները: «Թեյհան ինթերնեյշնլ»-ը (Keyhan International) մեջբերում է Իրանի հոգևորականության խոսքերը այս մասին, որ «Եթե Մոսկվան փորձի միջամտել Իրանի ներքին գործերին, ապա կհանդիպի այնպիսի ընդդիմության, ինչպիսին ստացավ ԱՄՆ-ը»⁷: Մակայն պատմությունը ցույց տվեց, որ ինչպես էլ Իրանը ցանկանա, չի կարող առաջընթաց ունենալ՝ առանց կապիտալիստական կամ խորհրդային երկրների հետ համագործակցության: Հիշարժան է «Միդլ Իսթ»-ի (Middle East L.) խոսքերը հետևյալի մասին.

¹ **Նովիանիսյան Ն.**, Այսթուլլա Խոմեյնիի ֆեյնմենը, Իմամ Խոմեյնի – 100, Իրանի Իսլամական Հանրապետության առաջնորդ և հիմնադիր իմամ Խոմեյնու մտքերի և հայացքների քննարկմանը նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, 1999 թ., էջ 14:

² **Ագաev Ս.**, Իրան: рождение республики, М., 1984, с. 120.

³ **Ագաev Ս.**, Իրան в прошлом и настоящем, М., 1981, с. 228.

⁴ **Склярнов Л.**, Создание правительства Ш. Бехтнера, Иранская Революция 1978-1979 гг. Причины и уроки, глава 6, М., 1989, с. 120.

¹ **Քայլույտյան Վ.**, Իրանի պատմություն, Երևան, 2006, էջ 710:

² **Ագաev Ս.**, Իրան в прошлом и настоящем, М., 1981, с. 220.

³ **Арабаджян А.**, О речи Имама Хомейни на кладбище Бехеште Захра, Иран: ислам и власть, М., 2001, с. 5.

⁴ «Իրան-Նամե» հանդես, N 12, Երևան, 1995, էջ 2-6:

«Իրանը չի կարող ապահովել սեփական պահանջները, ցանկանա խոսնելին այդպես, թե՛ ոչ: Նա ստիպված է սերտ կապեր պահպանել ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի հետ»¹:

Իհարկե, նման հարաբերությունները անհրաժեշտ էին երկրի բնականոն առաջընթացը ապահովելու համար: Ժամանակի ընթացքում խոսնելին մեղմացրեց իր հակամաքիկյան դիրքորոշումը: Ամերիկացի լրագրողին տված հարցազրույցում խոսնելին նշում է. «Եթե ԱՄՆ-ը դադարեցնի միջանտել մեր գործերին և հարզի մեր պետությունը, ապա մենք էլ երանք կվերաբերվենք համապատասխան ձևով»².- մեջբերում է «Ինթերնեյշլ շերալդ Տրիբուն»-ը (International Herald Tribune):

Այսպիսով, 1970-ական թթ. երկրում տիրող քաղաքական, սոցիալ-տնտեսական և գաղափարախոսական վիճակը, օտար տերությունների միջամտությունները Իրանի ներքին կյանքին, երկրի բնական հարստությունների շահագործումը, իշխանությունների՝ հոգևորականության դիրքերը թուլացնելու քաղաքականությունը, նախադրյալներ ստեղծեցին 1978-79 թթ. հեղափոխության համար: Փաստորեն, հեղափոխությունը ուներ իրականանալու համար թե՛ արտաքին և թե՛ ներքին դրդապատճառները: Այդ իսկ պատճառով հեղափոխությունը դարձավ հակաիմպերիալիստական և հակաշահական մի մեծ շարժում, որը հնարավոր չեղավ կանգնեցնել: Այն ստացավ միջազգային լայն արձագանք. շատերը իսլամական հեղափոխությունը նշանավորեցին որպես կարևորագույն իրադարձություն, որի արդյունքում ստեղծվեց իրական այլընտրանք՝ հակադրված երկու առաջատար բևեռների՝ այսպես կոչված «երրորդ ուղու գաղափարախոսությամբ հասարակարգ, որում էլ կայանում է հեղափոխության պատմական նշանակությունը: Ինչպես իրանական, այնպես էլ արևմտյան մամուլում այն նշանավորվեց որպես 20-րդ դարի վերջին քառորդի խոշորագույն իրադարձությունից մեկը, որի արդյունքում իրանցի ժողովուրդը ազատվեց արևմտյան ազդեցությունից:

Իսլամական հեղափոխության տարիներին ձևավորված հակաիրանական տրամադրությունները և քարոզչությունը շարունակվում են նաև մեր օրերում: Ինչպես նախկինում, այժմ էլ արևմտյան լրատվամի-

ջոցները քննադատում են Իրանին՝ այս անգամ արդեն կապված միջուկային ծրագրի, միջազգային ահաբեկչության մեջ մասնակցություն ունենալու մեղադրանքով: Հակաիրանական թեմաները այսօր էլ շարունակում են մնալ արդիական միջազգային լրատվամիջոցների էջերում:

Resume

The Coverage of Iran's Public-Political Activities in the Western Press during years of Islamic Revolution

Hayk Nazaryan

Islamic revolution in Iran is one of the biggest events in the last quarter of 20th century. In these years the revolution and its results were the most actual theme in the Western media Coverage. Iran's political, social-economic and ideological situation, interventions of foreign countries towards internal life of Iran, created backgrounds for 1978-79's revolution. It was marked as the biggest event of the last quarter of 20th century in Iranian, as well as in the Western press, as a result of which the Iranian people were relieved from western influence. But, today we also see anti-iranian propaganda in the pages of global Mass media, which continues the old traditions.

¹ Кузнецова Л., Первые внешнеполитические акции ИРИ. Внешняя политика Временного революционного правительства, Иранская Революция 1978-1979 гг. Причины и уроки, глава 6, М., 1989, с. 386.

² Складиров Л., Создание правительства Ш. Бахтияра, Иранская Революция 1978-1979 гг. Причины и уроки, глава 6, М., 1989, с. 121.

IMAM KHOMEINI AND THE ISLAMIC REVOLUTION OF IRAN

As we know, every revolution has its ideology which is influenced by an ideology many years before the occurrence of the revolution.* Bodies of people are put gradually into movement and revolution by understanding/checking this new thought. *

The thought of an Islamic government was presented by Imam Khomeini during power period of Reza Khan (father of king Mohammad-Reza) in Kashf-al-Asrar book. In other words, this thought was introduced by Imam's followers among Iranians 40 years before the Islamic revolution of Iran which was welcomed by the Iranian Muslim society. 99% of the Persian population are Muslims and so naturally interested in* Islamic methodologies. The great ideal of Islam is formation of an Islamic government which was reintroduced by Imam Khomeini.¹

Not only the king's regime didn't pay any attention to Islamic values, but also it tried to eliminate them. In the declaration of state/provincial committees written by king Mohammad-Reza, the Islam condition and swearing to the Quran was removed completely from the fundamental law. Pahlavi's government changed the origin of the Iranian calendar -that was according Muslims history, from the immigration date of the holy prophet from Mecca to Medina, to the starting date of the first Persian kingdom over 2500 year ago. It insisted on ancient Iranian traditions instead of Islamic ones calling itself the continuation of Hakhamaneshi and Sasaki kingdoms².

The king was interested in attracting the western advantages, especially the United States, but the revolutionists thought about political independence in the region. In 1342 Imam Khomeini was arrested and transferred from Qom to Tehran. On Khordad 15th the same year, i.e. only a few days after his arrest lot's of people belonging to different groups and parties came to streets in order to shout for Imam's freedom. King's regime killed people, but this rise caused Imam to be known as the opposition leader and since that time, all political groups

¹ Management and governing system in Islam By Ayatollah Mohammad Shamsodin. Translated By Dr. Seyyed Morteza Ayatollahzade Shirazi, Professor of Tehran University. By Tehran Publications, Falls 1375, Tehran.

² Study of Methodologies in Islamic Studies.

moved under his leadership. Iranians believed in reform so far, but after that cruel massacre, what they asked for was only the regimes change.

The rise caused Imam's immediate freedom, while the regime could not tolerate his influence, exiled him to Turkey and then to Iraq so that they could prevent his penetration on people.

In terms of Shiaa beliefs, Imam Khomeini was a religious leader and reference, so people obeyed him in religious issues and this caused penetration of his words.

In his exile days in Iraq, he used to teach religious science and established Islamic government ideology and the thought of "Velayat Faqih" so that this thought found its place in terms of scientific issues. The revolutionist in Iran kept their relationships alive with Imam Khomeini by distributing his words and thoughts.

Imam Khomeini invited people to oppose to the king's government, as he did not pay attention to people's religious view and even fought against it while king's opposition's fame was getting more and more. A vast number of people came to the streets in many parts of the country for changing king's regime and asking for Imam Khomeini's return to Iran¹.

Imam Khomeini insisted on the fact that our revolution is Islamic and should be the same as the revolution of the holy prophet, he did not believe in an armed rebellion. He said we should make relationships seeking fundamental/deep revolutions in the society; the change in the political regime is not solely an ideal, but also is an Islamic revolution, in other words all the people of the society. He was a politician who always insisted on the fact that the way of freeing the society needs to follow the teachings of the holy Quran.

Imam Khomeini was a man of moral, Irfan and ethics. He had a high level of penetration among people, such that they were willing to sacrifice themselves for his words. In 1357 Imam Khomeini returned from Nofel Loshato, France, to Tehran and became the leader of the regime's opposition. People went on the streets even willing to die. As we know, a revolution needs the presentation of an ideology in its first stage by the ideologue and in the Islamic revolution of Iran, Imam Khomeini did this job, but now the society needed a hero so the regime could be removed. This hero was nobody but himself. He asked people to get in the streets bravely with self-esteem and to not pay attention to the governmental barrier. Finally after years of fighting by millions of people in the streets and the surrender of the military services, the king escaped from Iran and the government was obtained by the revolutionists.

It was Imam Khomeini who had to build a new system over the previous one as the architect of the Islamic revolution. Imam Khomeini held a referendum

¹ By Ali Akbar Alikhani and others, InamSadegh University Publications, Spring 1386, Tehran.

about an Islamic government and people voted for "YES" to a majority of 99%. He formed a committee with presence of politicians and the genius in order to write the new constitution.¹

Imam Khomeini believed in strengthening the forces. He selected five religious authorities as the judgment excellence committee in order to supervise the courts. He put "Velayat Faqih" as the basis of the government. He was saying people need a leader and a boss and this was for certain. We want a leader too, but this leader should be the one most familiar with Islamic rules, since our people are Muslim and they want an Islamic government. They voted for to the Islamic government and therefore a person should have the leadership of this government that is familiar with Islam.

During the 32 years after the victory of the Islamic revolution, at least 32 main/big elections have been held in Iran. If we refer to the exact statistics, we would clearly notice that the rate of the political participation of Iranians is considerable. In Iran, many media and parties are active and there is freedom of word too.²

Unfortunately the global advertisement against Iran and its regime is very negative and vast. If a political science researcher or a sociologist travels to Iran in order to examine status of the country without purpose, he/she would easily find out that democracy is considerably in Iran, albeit Iran and all countries should try to reach a completely democratic society, but the say that there is no democracy in Iran is not really acceptable.

In this abstract article, we cannot describe growth indices in development statistics, but we declare our goal as an example. We hope that this revolution would reach its ideals. At last I appreciate my dear professor Dr. Alexander Markarov who guided me during this course.

Անփոփում

Իմամ Յոմեյնիի և Բրանի Բայամական հեղափոխությունը

Ջաֆար Քարիբի
ԵՊՀ միջազգային
հարաբերությունների ֆակուլտետ

Յուրաքանչյուր հեղափոխություն մի կոր զաղափարախոսության կարիք ունի, որի նպատակները ներկայացնում է այդ հեղափոխությունը: Այս նպատակը, որը հենց իսլամական իշխանության հաստատումն էր, 40 տարի հեղափոխությունից առաջ ծրագրվել և հասարակ ու ազնվական գանգվածների մեջ տարածվել էր իմամ Յոմեյնիի կողմից: Այս նպատակի իրականացման համար Յոմեյնիին իր քաղաքական ուժերի և հետևորդների միջոցով կարողացավ շահի իշխանությունը տապալել և որպես հեղափոխության առաջնորդ լինել: Շահի իշխանության տապալումից հետո մի կոր իշխանության հիմնադրի կարիք էր զգացվում, և այդ կոր հիմնադիրը նա իմամ Յոմեյնիին էր: Ուստի, ինչպես ցույց է տալիս պատմությունը, թե՛ հեղափոխության զարգացմանը, թե՛ առաջնորդը և թե՛ կոր իշխանության հիմնադիրը իմամ Յոմեյնիին էր:

¹ Revolutionary Islam and Islamic Revolution, By Dr. Abolfazl Ezzati, Hoda Publications, 1359, Tehrn.

² Governmental System in Islam, Davood Firahi, Winter 1387, Farhang va Ershad Publications.

«ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԵՄՏԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏՈՒՄ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՀՈԴՎԱՄԱՆԵՐԻ ԵՎ ԶԵԿՈՒՑՅՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հրատ. խմբագիր՝	Մ. Գ. Յավրյան
Տեխ. խմբագիր՝	Վ. Զ. Բդոյան
Համ. ձևավորումը՝	Ա. Խ. Աղուզումցյանի
Կազմի ձևավորումը՝	Կ. Հ. Սարգսյանի

Ստորագրված է տպագրության՝ 23.05.2011:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Հրատ. 4.2 մամուլ, տպագր. 5.0 մամուլ = 4.7 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 150: Պատվեր՝ 27:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52